

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

**Ոչ մի տեղ՝ առանց  
Սյունիքի ու Արցախի:  
Առանց աշխարհագրական  
այդ հզոր ողնաշարի մեր  
ամբողջական հայրենիքը  
գոյություն ունենալ չի  
կարող:**

Գարեգին Նժդեհ

1921 թ. ապրիլի 26-ին Տաթևի վանքում կայացավ՝ Ինքնավար Սյունիքի հայ ազգաբնակչության 2-րդ (Արտակարգ) համագումարը, որտեղ 64 գյուղից ներկա էին 95 պատգամավոր և Սպարապետ Նժդեհը՝:

Ինքնավար Սյունիքի կառավարության Նախագահ Գեղեճ Տեր-Մինասյանը, բացելով համագումարը, առաջարկեց ընտրել Նախագահություն: Առաջարկեցին թեկնածուներ, տեղի ունեցավ՝ քվեարկություն: Համագումարի Նախագահ ընտրվեց Սերգեյ Մելիք-Յուլյանը, փոխնախագահ՝ բժիշկ Մինասյանը, քարտուղարներ՝ Ս. Սազանդարյանը և Վ. Վարդապետյանը:

Բացելով համագումարը՝ Նախագահ Ս. Մելիք-Յուլյանն ընդգծեց, որ այն ունի եզակի նշանակություն և կոչված է կարևոր դեր ունենալու Ինքնավար Սյունիքի պատմության մեջ: Համագումարը հաստատեց հետևյալ օրակարգը՝ 1. Ինքնավար Սյունիքի դիվանի կազմի հրաժարականը, 2. պարենավորման հարցը, 3. Ինքնավար Սյունիքի սահմանադրության վերանշակումը, 4. ազատ հողերի բաշխման հարցը, 5. պաշտոնյաների վարձատրության հարցը, 6. դպրոցական գործը, 7. պետական հարստության պահպանության հարցը, 8. Նոր կառավարության (դիվանի) ընտրությունը, 9.



## 105 տարի առաջ՝ 1921 թ. ապրիլի 26-ին, Սյունիքում ստեղծվեց Լեռնահայաստանի Հանրապետությունը՝ Գարեգին Նժդեհի գլխավորությամբ

համագումարում հարուցվեցին այլ խնդիրներ: Օրակարգի այս հարցերը պետք է լուսաբանվեին Նժդեհի, Սյունիքի խորհրդարանի և կառավարության հաշվետվությունների մեջ: Չեկուցման համար խոսքը տրվեց Նժդեհին: Նա հանգամանակից հաշվետվություններ կայացրեց, կատարեց Ինքնավար Սյունիքի ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական

իրավիճակի բազմակողմանի ու խոր վերլուծություն, հանրագումարի բերեց Նախորդ համագումարից հետո կատարված աշխատանքները և առաջարկեց մոտակա ժամանակների հրատապ խնդիրները: Սպարապետի սպառիչ գեկուցումից հետո համագումարի պատգամավորներն ավելորդ համարեցին լսել հաշվետու մյուս գեկուցումներն առանձին-առանձին և

անցան մտքերի փոխանակության: Այնուհետև քննարկվեց պարենավորման հարցը, որի մասին դարձյալ գեկուցեց Նժդեհը: Նա նկարագրեց տնտեսական ծանր կացությունը՝ գավառում, բնակչության կրած տառապանքները, որոնք անընդհատ խորանում էին Արարատյան դաշտից ելած հազարավոր  
**Շարունակությունը՝ էջ 3**

## Սյունիքը մեծ մարտահրավերի դեմ հանդիման. «Թրամփի ուղի» անվամբ փաթեթավորված «Չանգեզուրի միջանցքի» իրականությունը

2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը և «միջանցք» եզրույթի ներմուծման փորձերը

Թուրքիայի և Ադրբեջանի միջև ուղիղ ցամաքային կապ ապահովելու, ընդհանուր սահման ունենալու և Թուրքիայի կողմից Հարավային Կովկասում իր ազդեցության գոտու ընդլայնման նորոգյա փուլի մեկնարկը տրվեց 2020 թ. Արցախյան պատերազմով: Վերոնշյալ նպատակներն այս անգամ բանաձևվեցին «Չանգեզուրի միջանցք» քաղաքական ծրագրի մեջ, որի իրականացմանը թուրք-ադրբեջանական տանդեմն ամբողջ թափով ձեռնամուխ եղավ պատերազմի ավարտից անմիջապես հետո (թեև այս ուղղությամբ Նախապատրաստական աշխատանքները սկսվել էին ավելի վաղ): Ադրբեջան-Նախիջևան-Թուրքիա միջանցք ձևավորելու մասին նորագույն խոսույթի դե յուրե մեկնարկի առիթը հանդիսացավ 2020 թ. նոյեմբերի 9/10-ին ՀՀ վարչապետի, Ադր-



Ռուբեն Մելքոնյան

բեջանի Նախագահի և ՌԴ Նախագահի միջև ստորագրված եռակողմ հայտարարությունը: Պատերազմի 44-օրյա շրջափուլի հրադարար հանդիսացող այդ փաստաթղթում ոչ միայն խոսվում էր Արցախյան հիմնահարցի տարբեր ասպեկտներից, այլև «անակնկալ» կերպով անդրադարձ կար նաև ճանապարհային



Վարուժան Գեղամյան

ենթակառուցվածքներին, որոնք առաջին հայացքից որևէ առևտրային չունենին Արցախյան հիմնահարցի հետ, սակայն, այնուամենայնիվ, արձանագրված էին փաստաթղթում: Այսպես, այդ հայտարարության 9-րդ կետում նշվում է. «Ապաշրջափակվում են տարածաշրջանում բո-  
**Շարունակությունը՝ էջ 4**

Բաբվում և Շուշիում հայերի ցեղասպանությունը մինչ օրս չի ստացել իրավական գնահատական, ինչը թույլ է տվել Բաբվին շարունակել ցեղասպանական քաղաքականությունը

### Ի ՊԱՏԱՍԽԱՆ ԱՐԻԲԵՋԱՆԻ «ՕՍԲՈՂՄԱՍԵՆ»-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Օկուպանտ և ցեղասպան, արհեստաձին, կեղծ կազմավորման՝ Ադրբեջանի, այսպես կոչված, մարդու իրավունքների հանձնակատարը 2026 թվականի մարտի 30-ին հայտարարել է, որ «...պատմության տարբեր փուլերում ադրբեջանցիները հայերի կողմից ենթարկվել են եթևիկ գտումների և ցեղասպանության նպատակաուղղված քաղաքականության:

1918 թվականի մարտ-ապրիլ ամիսների իրադարձություններն այդ քաղաքականության ամենաարյունալի և ամենաողբերգական դրսևորումներից մեկն էին: Միջազգային կազմակերպությունները և ՄԱԿ-ի անդամ պետությունները պետք է սկզբունքային դիրքորոշում ընդունեն ադրբեջանցիներին դեմ իրականացված եթևիկ գտումների և ցեղասպանության մի շարք գործողությունների վերաբերյալ և 1918 թվականի իրադարձությունները ճանաչեն որպես ցեղասպանության ակտ»:

Առայժմ մի կողմ թողնենք այն հարցի քննարկումը, որ Ադրբեջանի նման բռնապետական երկրում չի հարգվում ու պաշտպանվում մարդու իրավունքը, էլ ուր մնաց, թե այդպիսի երկրում գոյություն ունենա մարդու իրավունքների հանձնակատար: Հետևաբար, Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարն իրականում Իլիամ Ալիևի հակահայկական քաղաքականության իրականացման գործում վերջինիս հանձնարարությունները կատարող հերթական պաշտոնյան է, ոչ ավելին:

Այժմ ըստ ելույթի: Նախ, պետք է նշել, որ մեջբերվածը կատարյալ սուտ է ու կեղծիք, որը չի ապացուցվում օբյեկտիվ, անաչառ ու արժանահավատ փաստերով: Իսկ իրականությունը հետևյալն է: 108 տարի առաջ՝ 1918 թ. սեպտեմբերի սկզբներին, Կովկասյան իսլամական բանակը Հայոց ցեղասպանության դահիճներից մեկի՝ Էնվեր փաշայի կրտսեր եղբոր՝ գեներալ-լեյտենանտ Նուրի փաշայի հրամանատարությամբ գրավել է Բաբուն և այնտեղ իրականացրել 30.000-ից ավելի հայերի կոտորած, այսինքն՝ ցեղասպանություն:

106 տարի առաջ՝ 1920 թվականի մարտի 22-ին, արհեստաձին, կեղծ կազմավորման՝ Ադրբեջանի վարչակազմի կողմից սկսվել և չորս օր անընդմեջ՝ մինչև մարտի 26-ը ներառյալ, իրականացվել է հայոց հիևավորաց բնակավայրերից մեկի՝ Շուշիի հայության ցեղասպանությունը: Այդ թվականին Շուշիում ապրում էր մոտավորապես 44.000 մարդ, որից մոտավորապես 24.000-ը հայեր էին, 20.000-ը՝ պարսիկներ, լեռնային մահմեդականներ և այլն:

Իրականացված ցեղասպանության հետևանքով հայերի թիվը կտրուկ նվազել է կազմել է մոտավորապես 5000 մարդ: Բաբվում և Շուշիում իրականացված հայերի ցեղասպանությունը ոչ միայն ոճրագործություն էր հայ ազգի նկատմամբ, այլև մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

Առաջադեմ մարդկության կողմից այն մինչ օրս չի ստացել ոչ քաղաքական, ոչ էլ իրավական գնահատական, ինչը թույլ է

Շարունակությունը՝ էջ 7



## Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը Ստրասբուրգում մասնակցել է ԵԽ Կոնգրեսի 50-րդ նստաշրջանին

Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը, որպես Հայաստանի Հանրապետության նորընտիր պատվիրակության անդամ, մարտի 31-ից ապրիլի 2-ը Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում մասնակցել է ԵԽ Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի 50-րդ հոբեյանական նստաշրջանի աշխատանքներին:

Նստաշրջանի մեկնարկին պաշտոնապես հաստատվել է վավերացվել են ազգային նոր պատվիրակությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության հնգամյա մանդատները: Այսպիսով, Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանն առաջիկա հինգ տարիների ընթացքում լիարժեք քվեարկության և մասնակցության իրավունքով կներկայացնի Հայաստանի տեղական իշխանությունների շահերն ու առաջնահերթությունները համաեվրոպական այս կարևորագույն հարթակում:

Նստաշրջանի առաջին աշխատանքային օրը հազեցած էր ինչպես կազմակերպչական, այնպես էլ ռազմավարական կարևորության հարցերով, մասնավորապես՝ լիազումար նիստի ընթացքում տեղի է ու-

նեցել Կոնգրեսի նոր նախագահի ընտրությունը, որին հաջորդել է Նորընտիր նախագահի պաշտոնական ելույթը և 50-րդ նստաշրջանի օրակարգի հաստատումը:

Օրակարգի գլխավոր հարցերից էր Ուկրաինայի վերականգնման և վերակառուցման գործընթացը տեղական ու տարածքային մակարդակներում: Քննարկմանը զեկույցներով հանդես են եկել Եվրոպայի խորհրդի Սարդու իրավունքների հանձնակատարը և Ուկրաինայի բարձրաստիճան պաշտոնյաները:

Տեղական իշխանությունների պալատի նիստում, որտեղ ընտրվել են Պալատի նախագահն ու 7 փոխնախագահները, ներկայացվել են Լիտվայում և Մոնակոյում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա-

յի կիրարկման վերաբերյալ մոնիթորինգային զեկույցները, որոնց հաջորդել են հարցուպատասխաններ տվյալ երկրների ներքին գործերի նախարարների հետ:

Տվյալ օրվա աշխատանքներն ամփոփվել են «Առողջապահության հասանելիությունը ճնշման ներքո. մարտահրավեր բոլոր տարածքների համար» խորագրով թեմատիկ բանավեճով, որտեղ ընդգծվել է տեղական իշխանությունների դերը բնակչությանը որակյալ ծառայություններ մատուցելու գործում:

\*\*\*

Կոնգրեսի երկրորդ օրը, որպես հանձնաժողովի լիիրավ անդամ, համայնքի ղեկավարը Եվրոպայի պալատում մասնակցել է ԵԽ Կառավարման, բաղադրական ներգրավվածության և շրջակա միջավայրի հանձնաժողովի նիստին, որի հանրային հատվածում հանձնաժողովը քննարկել է ընդունելի է ռազմավարական նշանակության մի շարք զեկույցներ ու բանաձևերի նախագծեր:

«Ինչպե՞ս պայքարել ավիամերձ տարածքների երոզիայի դեմ», զեկույցն ընդգծում է ծովի մակարդակի բարձրացման և ծայրահեղ եղանակային երևույթների հաճախականության աճին հարմարվելու նոր մոտեցումների հրատապ անհրաժեշտությունը:

«Վիճելի հիշողություններ. ինչպե՞ս կարող են տեղական և տարածքային իշխանությունները կառավարել հակասական մշակութային ժառանգությունը», փաստաթուղթն ուղեցույց է տրամադրում համայնքների՝ հակասական կամ մոռացված հուշարձանների և մշակութային վայրերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում շահագրգիռ կողմերին ներգրավելու համար: Այսպիսի մասնակցային մոտեցումը խթանում է ժողովրդավարական ներառականությունը, հանդուրժողականությունը և երկխոսությունը:

Հանձնաժողովը հաստատել է նաև նոր զեկույցների մշակման տեխնիկական առաջադրանքները, որոնց շուրջ աշխատանքները կմեկնարկվեն առաջիկայում:

Ուկրաինայի վերականգնում. նախատեսվում է մշակել ուղեցույցներ տեղական և տարածքային մակարդակներում Ուկրաինայի տնտեսությունների կայուն վերականգնման և վերակառուցման համար:

Կենսաբազմազանության կորուստ. նոր զեկույցը կանդախտաբան այն աննախադեպ ճնշմանը, որի տակ գտնվում է կենսաբազմազանությունը, և կղիտարկի տեղական իշխանությունների դերը բնապահպանական այս ճգնաժամի հաղթահարման գործում:

Կոռուպցիայի կանխարգելում. կմշակվի գործնական ստուգաթերթ, որը տեղական իշխանություններին կտրամադրի անհրաժեշտ գործիքակազմ կոռուպցիոն ռիսկերը կանխելու և բարեկարգություն խթանելու համար:

Նիստի ավարտին ներկայացվել են նաև տեղական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության ուղղված վերջին աշխատանքները, ինչպես նաև հաստատվել է հանձնաժողովի 2026-2027 թվականների աշխատանքային ծրագիրը:

\*\*\*

Ելույթով հանդես է եկել Եվրոպայի խորհր-

դի գլխավոր բարտուղարի տեղակալ Բյոռն Բերգեն:

Քննարկվել է քվեարկությամբ ընդունվել են բանաձևեր «Ազատ ընտրություններ տեղական և տարածքային մակարդակներում» և «Ընտրված պաշտոնյաների նկատմամբ բռնության դեմ պայքարը» թեմաներով: Այս կարևորագույն բանաձևերում հանդիսանում են Եվրոպայի նոր ժողովրդավարական պակտի (New Democratic Pact for Europe) ձևավորման առաջնային բաղադրիչները:

Նիստի ընթացքում ելույթով հանդես է եկել Մոլդովայի կառավարության գլխավոր բարտուղար Ալեքսեյ Բուզուսկու՝ ներկայացնելով ԵԽ Նախարարների կոմիտեում Մոլդովայի Հանրապետության նախագահության ծրագիրը և պատասխանելով պատվիրակների հարցերին:

Տեղի են ունեցել թեմատիկ բանավեճեր՝ «Միջազգային անկարգություն, տարածքային հետևանքներ» և «Տեղական ժողովրդավարության պահպանումը Վրաստանում» խորագրերով:

Ժամանակակից մարտահրավերներին ընդառաջ՝ լիազումար նիստում հաստատվել են նաև արհեստական բանականության կիրառման ոլորտում տեղական և տարածքային իշխանությունների կարողությունների հզորացման, ինչպես նաև տեղական ու տարածքային մակարդակներում սոցիալական իրավունքների ապահովման վերաբերյալ բանաձևերի և հանձնարարականների նախագծերը:

Եվրոպական մակարդակով ընդունվող այս որոշումները մեծապես նպաստում են ապահովել, նորարար և իրավունքապետ համայնքների կառուցմանն ու զարգացմանը:

\*\*\*

Եվրոպական բարձրագույն այս հարթակում աշխատանքային վերջին օրվա առաջնային բանաձևերը կմշակվեն Եվրոպական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև ժամանակակից գրքավոր մարտահրավերներին:

Կապակի և մեր տարածաշրջանի համար առանձնահատուկ կարևորություն ունեն «Սահմաններից մինչև համայնքներ. գլոբալ տեղաշարժեր, տեղական արձագանքներ» խորագրով թեմատիկ բանավեճը: Քննարկումների առաջնային էին սահմանամերձ համայնքների դիմակայության բարձրացումը, անվտանգային մարտահրավերները և համայնքների կառավարման ճգնաժամային արձագանքման մեխանիզմները, որոնք կենսական նշանակություն ունեն մեր քաղաքի համար:

Նստաշրջանի ընթացքում ընդունված բանաձևերն ու քննարկումները, որոնք միտված են «Եվրոպայի նոր ժողովրդավարական պակտի» ձևավորմանը, հնարավորություն են տալիս Եվրոպական լավագույն փորձը տեղայնացնել նաև Կապան համայնքում:

Կապակի համայնքապետարանը շարունակում է հետևողականորեն ընդլայնել միջազգային համագործակցությունը՝ ի նպաստ համայնքի զարգացման, միջազգային հարթակներում Կապանի ծայրը լսելի դարձնելու և բնակիչների իրավունքների պաշտպանության ու բարեկեցության ապահովման:

**ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**



**Կապակի և մեր տարածաշրջանի համար առանձնահատուկ կարևորություն ունեն «Սահմաններից մինչև համայնքներ. գլոբալ տեղաշարժեր, տեղական արձագանքներ» խորագրով թեմատիկ բանավեճը: Քննարկումների առաջնային էին սահմանամերձ համայնքների դիմակայության բարձրացումը, անվտանգային մարտահրավերները և համայնքների կառավարման ճգնաժամային արձագանքման մեխանիզմները, որոնք կենսական նշանակություն ունեն մեր քաղաքի համար:**

# 105 տարի առաջ՝ 1921 թ. ապրիլի 26-ին, Սյունիքում ստեղծվեց Լեռնահայաստանի Հանրապետությունը՝ Գարեգին Նժդեհի գլխավորությամբ

## Սկիզբը՝ էջ 1

գաղթականներին կերակրելու պատճառով: Սյունիքը հացի մեծ կարիք ուներ՝ սկսած դեռ 1918 թվականից, երբ Այսրկովկասը մատնվել էր բառի, երբ ծայր էին առել հայ-ադրբեջանական և հայ-վրացական բախումները, որի հետևանքով փակվել էին ճանապարհները, և լեռնաշխարհը կղզիացել էր: Բայց եթե 1918-1919 թվականներին վիճակն ինչ-որ կերպ տանելի էր, ապա 1920 թ. ամառվանից սովը չոքել էր զանգեզուրցիների դռանը: Ճիշտ է, 1920-ին Կարմիր բանակի զորքերից խլած հացի պաշարները փոքր-ինչ մեղմել էին զանգեզուրցիների սովը (Նժդեհի պատկերավոր խոսքերով «ասած՝ զանգեզուրցին «հաց էր ճարել իր սրի ծայրով»), բայց 1921 թ. գարնանը ևս Նորից սոված էր:

1921 թ. գարնան ամիսներին սովի սաստկացումը երկու պատճառների հետևանք էր. ա) Սյունիք եկած բազմազան գաղթականությունը արագորեն նվազեցնում էր զանգեզուրցիների հացի առանց այն էլ խոզուկ պաշարը, բ) Արաքսի վրայով Սյունիքից դեպի Պարսկաստան կամուրջ չլինելը և այդ երկրից բավարար քանակությամբ հաց չստանալը: Աշխարհից կտրված երկրամասը դրսի օգնության որևէ հույս չուներ:

Այս պայմաններում սովը սաստկանում էր օրըստօրե, ժամ առ ժամ: Շատ գյուղերի բնակիչների միակ սնունդը դաշտերի բանջարեղենն էր և արմտիքը:

«Դիրքապահ վաշտերը շատ ռազմաճակատներում ապրում էին վայրի շագանակի այլուրից պատրաստած հացով,– ևչել է Նժդեհը: – Գողթանը գործածեց անզամ կատվի և էջի միս:

Դաշտերում չմնաց ոչ աղվես, ոչ ագռավ: Դիրքապահ զինվորի մի մասի պարտականությունը դարձավ որսով սնունդ ճարելը: ...Դիրքապահ զինվորությունը, զինված և գործուն վիճակի մեջ, դեռ մի կերպ կարող էր լրացնել իր աղբատիկ սնունդը: Նրանք էին երկնքի թռչունները, վայրի գազաններից հովազը, արջը, նրանք էին վայրի պտուղները»<sup>2</sup>:

Սպառվելու վրա էր ռազմամթերքը: Նման դժմոհակ պայմաններում, ասում էր Նժդեհը, երբ բանակները դիմադրելու փոխարեն թշնամու անարգանքին են հանձնում իրենց դրոշակները, երբ «տեղի են տալիս կառավարությունները», «սյունեցին չքեց իր վահանը», քանզի նրա մարմնում «ցեղի հրաշագործ ոգին» էր: Կրելով գերմարդկային տառապանքներ՝ նա գարմանալիորեն չէր ընկճվում, չէր թուլացնում բազուկը. շարունակում էր ամուր բռնած պահել գեները<sup>3</sup>:

Համագումարին տված հաշվետվության մեջ Նժդեհը պատգամավորներին տեղեկացրեց, որ հացի չլինել պաշարները ինչ-որ չափով լրացնելու համար Ինքնավար Սյունիքի իշխանությունները 1921 թ. գարնանը մի շարք փորձեր են արել հաց հայթայթելու հարևան ադրբեջանական թուրքաբնակ և բորաբնակ՝ Ավդալարի, Կուբաթլիի, Չանգեյանի, Չաբրախիլի շրջաններում: Այդ նպատակով մարտի 21-ին Ադրբեջանի մուսուլման գյուղերից Գորիս էին հրավիրվել երեք մարդ՝ Եվագեյկովը Եվագլար գյուղից, Հաջի Հաջիմը՝ Շուռնուխից և մեծահարուստ Քերբալայ Ալամամեդը՝ Մեյլիք-Աիմեդու գյուղից, որոնց հետ Նժդեհը՝ հանդիպել և առաջարկել էր համեմատաբար բարձր գներով հացահատիկ վաճառել: Սրանք համաձայնել էին, բայց վերադառնալով իրենց գյուղերը՝ ադրբեջանական իշխանությունների սպառնալիքների տակ հրաժարվել էին կատարել տված խոստումը: Նման մեկ այլ խորհրդակցություն ապրիլի 6-ին հրավիրվել էր Կապակի Ագարակ գյուղում, որտեղ Խոջահան, Միլեման, Խորթան, Իսկենդերբեյլի, Դոնդարյու և այլ գյուղերից եկել էին ոչ քիչ թվով հարուստ թուրքեր՝ Շահուվարբեկ Քալանթարովը, Բախուլու Էֆենդի Բեհչետին և ուրիշներ: Խորհրդակցության անձամբ մասնակցել էր Նժդեհը: Այստեղ ևս հացահատիկ վաճառելու խոստումներ էին եղել, որոնք

Նույնպես չէին կատարվել: Բնակչության և զորքի պարենավորումը համարելով առաջնային՝ համագումարը տեղի պաշտոնյաներին ցուցում տվեց՝ խիստ կազմակերպված կատարելու հացահատիկի հունձը, հացը հավաքելու անկողուստ, միաժամանակ՝ միջոցներ հայթայթելու Պարսկաստանից՝ լրացուցիչ հացահատիկ կամ այլուր ձեռք բերելու համար:

Պարենավորման խնդրի վերաբերյալ համագումարի միածայն ընդունած հայտարարության մեջ ասված էր. «Պարենավորման համար Սպարապետը հայտարարում է, որ մինչև Նոր հունձը հնարավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության\* Նյութական օգնությամբ հաց ձեռք բերել և միաժամանակ ըստ հնարավորության աշխատել կազմակերպել պետական տրանսպորտը և ժողովրդին ազատել փոխադրական ծանր պարտականությունից»<sup>4</sup>:

Այնուհետև քննարկվեց կառավարման մարմիններ կազմելու ձևի և սկզբունքների հարցը: Պատգամավորների ելույթներից հետո ձայների մեծամասնությամբ համագումարը որոշեց.

1. «Ինքնավար լեռնաշխարհի Ազատ Սյունիքը՝ հայտարարել անկախ պետություն և այն վերանվանել Լեռնահայաստան, որի մեջ մտնում են Չանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազ) և Լեռնային Դարաբազը: Գորիս քաղաքը համարել Լեռնահայաստանի մայրաքաղաք:

2. Քանի որ Նորաստեղծ պետությունն ազդարարվում էր հանրապետական և ժողովրդավարական, ուստի այն պետք է ունենար համապատասխան հաստատություններ՝ պառլամենտ, նախարարների խորհուրդ և ինքնիշխանությանը բնորոշ մյուս հատկանիշները:

3. Համագումարը հայտարարել Լեռնահայաստանի վարչապետություն՝ նախարարների խորհուրդ: Կառավարության անդամներին՝ հետապուս անվանել նախարարներ:

4. Վարչապետ ընտրել Սպարապետին՝ նրան վերապահելով նոր կառավարության կազմի ընտրությունը:

Կուռույի զորքերը պետք է մնային Նոր կառավարության տրամադրության տակ Բազարայում<sup>5</sup>:

Համագումարում հարց բարձրացվեց՝ Սպարապետ Նժդեհին զորավարի (գեներալի) աստիճան շնորհելու մասին: Մտքերի և կարծիքների փոխանակումից հետո խորհրդարան-համագումարը միաձայն որոշեց գեղապետ Նժդեհին շնորհել Չորավարի աստիճան և նրան պարգևատրել «Խուստուփյան արծիվ» երկաթե շքանշանով<sup>6</sup>:

Օրակարգի համաձայն՝ ապրիլի 27-ին որոշվեց նոր կառավարության կազմը: Նժդեհը համագումարի հաստատմանը զրավոր ներկայացրեց կառավարության՝ յոթ մարդուց բաղկացած հետևյալ կազմը՝ 1. Գ. Նժդեհ՝ վարչապետ և արտաքին գործերի նախարար, 2. Ս. Մեյլիք-Յուլյան՝ ներքին գործերի, 3. Հ. Տեր-Հակոբյան՝ պարենավորման, 4. Բժիշկ Մ. Մինասյան՝ խնամատարության, 5. Հ. Տևեճյան՝ արդարադատության և լուսավորության, 6. Ս. Օհանջանյան՝ հաղորդակցության և փոստահեռագրի, 7. Բժիշկ Ս. Եղիազարյան՝ ֆինանսների նախարար<sup>7</sup>:

Կառավարության կազմը հաստատելուց հետո մեկ ժամով հայտարարվեց ընդմիջում, որից հետո ընթերցվեց և ընդունվեց Լեռնահայաստանի գործին ու ղեկավարներին ուղղված համագումարի որոշյալի ուղերձը: «Համագանգեզուրյան Տաթևի 2-րդ խորհրդարանը սրտանց ողջունում է իր կուռ, անհաղթելի և ստյուգն բանակի ռազմիկներին և լիափայլ է, որ այդ անհաղթ բանակը, որ մինչև օրս իր փառապանծ հաղթանակներով աշխարհն է զարմացրել, այսուհետև էլ պատրաստ կլինի նոր հրաշքեր, նոր գարմանքեր ցուցադրելու բաղաբակիր շախարհին, իր կատարյալ և վերջնական հարվածը տալով հայ աշխատա-

վորության թշնամիներին:

Կազմված է կառավարություն: Մեր ինքնավար Սյունիքն այսուհետև կոչվելու է Լեռնահայաստան, որն իր քաջարի զորքով, իր անպարտ առյուծասիրտ մարտիկներով սպառնալիք պետք է լինի մեր բոլոր թշնամիների համար:

Մեր ազատարար Սպարապետ Նժդեհին տրված է Չորավարի տիտղոս և «Խուստուփյան արծիվ» շքանշան:

Այս սուրբ տաճարում ևս ուխտեց և իր սրբազան խոսքն ասաց՝ ձեզ հետ միասին, սև օրվա համար հայության բաժին համարված Սյունիքը դարձնել հայության վերածնության օրրան»<sup>8</sup>:

1921 թ. մայիսի 1-ին Լեռնահայաստանի կառավարությունը Գորիսում հանդես եկավ հռչակագրով: Կառավարությունը հայտարարում էր, որ «իր առաջնակարգ պարտքն է համարում լարել երկրի բոլոր ուժերը՝ զորացնելու մեր հայրենիքի ինքնապաշտպանության ռազմական կորովը. Լեռնահայաստանը պետք է լինի ամուր հենակետ մոտ ապագայում Մայր Հայաստանը թշնամի տարրերից ազատելու համար»<sup>9</sup>:

Կառավարությունն իր կարևորագույն խնդիրներին էր համարում պարենավորման գործի արմատական բարելավումը, գյուղացիական տնտեսությունների արագ զարգացումը: Միաժամանակ ազդարարվում էր կառուցել իրավական պետություն՝ «մտնեցնելով ժողովրդին և մատչելի դարձնելով դատավարությունը, զարկ տալ ժողովրդի լուսավորության գործին՝ կազմակերպելով նորանոր դպրոցներ, անգրագետների դասընթացներ, դասախոսություններ, զրույցներ, երեկոյաներ և տարածելով գրավոր հրատարակություններ: Կառավարությունը ջանք չի խնայելու հանրային առողջապահությունը և բժշկական օգնությունը դնելու ավելի լավ հիմքերի վրա»<sup>10</sup>:

«Լեռնահայաստանի կառավարության ղեկավարացիայում» շեշտված էր հարևան ժողովուրդների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման հրամայականը:

«Լեռնահայաստանի կառավարությունը պետք է ջանա սերտ բարեկամական, բարիդրացիական հարաբերություններ հաստատել մեր երկրի սահմաններում բնակվող և սահմանամերձ՝ ազգությունների, մանավանդ թուրք ժողովրդի հետ: Տնտեսական և առևտրական փոխհարաբերությունների զարգացումը ավելի ևս կնպաստի հայ ժողովրդի մերձեցումին թուրք, պարսիկ և տաճիկ ժողովուրդների հետ: Կառավարությունը նաև պիտի ձգտի ապահովել միջազգային բոլոր բարեկամ ուժերի օժանդակությունը մեր ազգային դատի բարեհաջող լուծման համար»<sup>11</sup>:

Կառավարությունը վստահ էր, որ ժողովրդի միակամ աջակցության պայմաններում ինքը կարող էր կատարել իր առաքելությունը:

«Լիափայլ լինելով, որ Լեռնահայաստանի ազատատենչ ժողովուրդը և պարտաճանաչ պաշտոնեությունը ոչ մի ջանք չեն խնայի ընդհանուր գնալու և բոլոր ուժերով աջակցելու կառավարությանը՝ համագումարի կողմից նրա վրա դրած պարտականությունները կատարելիս, նաև վստահ լինելով, որ Սյունյաց աշխարհի հերոսացած Դավիթ-բեկյան զորքերը, միացած բուն Հայաստանի զորամասերի հետ, նորանս փրկաբերություններով պիտի զորավիգ հանդիսանան կառավարությանը, իրենց Սպարապետի ղեկավարությամբ՝ Լեռնահայաստանի կառավարությունը ստանձնում է երկրի ծանր դեկը»<sup>12</sup>:

Այսպիսով, 1921 թ. ապրիլի 27-ից մի փոքր լեռնաշխարհում կողք-կողք գոյություն ունեին դաշնակցական երկու կառավարություններ՝ Սիմոն Կրացյանի գլխավորած Հայաստանի Հանրապետության նոր կառավարությունը և Լեռնահայաստանի Հանրապետության նոր կառավարությունը՝ Գարեգին Նժդեհի վարչապետությամբ:

«Մի կտոր հողի վրա երկու կառավարութ-

յուն»<sup>13</sup>,– հեգնանքով գրում էր նշանավոր դաշնակցական գործիչներից մեկը:

Նժդեհը նշում էր, որ Լեռնահայաստանի ստեղծման նպատակը «ոչ թե Սյունիքի անկախ գոյությունը երկարացնելն էր», այլ «որպեսզի այդ ապստամբ երկրամասին հնարավորություն տրվեր մի որոշ ժամանակով ևս դիմագրավելու իրեն օղակող թշնամիներին», մինչև որ երևանից փախչող հայ մտավորականությունը, երկրից հեռացող արևմտահայ զորամասերը, սպայության մեծագույն մասը, խմբապետերի մի որոշ մասը անցնեն Պարսկաստան<sup>14</sup>:

Արաքսի հայկական ափին՝ Մեղրի գյուղի դիմաց, շարունակում էին խոնավել հազարավոր գաղթականներ:

Նժդեհը ստիպված էր երկրորդ անգամ անցնել Արաքսը և անձամբ տեսնվել պարսից իշխանության ներկայացուցիչների և իր բարեկամ խաների հետ: Պարսկական կողմն այն մտահոգությունն ուներ, որ Սյունիքից Արաքսն անցնողների մեջ մեծ թիվ կարող էին կազմել զինվորական ուժերը: Դա նրան հիմք էր տալիս կարծելու, որ զանգեզուրցիները որոշել են դադարեցնել կռիվը Կարմիր բանակի դեմ այն դեպքում, երբ իրենք հույս ունեին, որ Սյունիքը ի վիճակի է լինելու կանգնեցնել բուլշևիկների առաջխաղացումը և նրանց հեռու պահել պարսկական սահմանից:

Նժդեհին հարկ եղավ բազմիցս հավաստիացնելու պարսկական իշխանությունների ներկայացուցիչներին, որ Սյունիքը չի մտածում տեղի տալու, որ արարատյան գաղթականությունը փոխադրվում է Պարսկաստան ոչ թե Սյունիքը վտանգված լինելու պատճառով, այլ որովհետև այնտեղ հաց չկա: Բացառված համարելով Սյունիքի անձնատվությունը՝ Նժդեհը նշում էր, որ ինքն իր զինված ուժերի հետ «մինչև վերջին փառսկուշուրը» կռվելու է անկախության համար:

Իր բարեկամ խաների հետ զրույցների ընթացքում պարզվեց նաև, որ որոշ մուլե ուժեր պարսկական ափում սադրիչ լուրեր են տարածել, թե իբր Նժդեհը պատրաստվում է լքել Չանգեզուրը և անցնել Պարսկաստան: Այս տեղեկությունը հատկապես խիստ բացասաբար էր անդրադարձել պարսկական կողմի վրա, որը և որոշել էր փակել գետանցը:

Թյուրիմացությունները պարզելուց հետո վերսկսվեց գաղթականության անցը Արաքսի վրայով<sup>15</sup>: Նժդեհը վերադարձավ Գորիս:

«Ահա թե նաև ինչ պատճառներով 3-4 ամիս ևս անհրաժեշտ էր դառնում երկարած գել Ազատ Լեռնահայաստանի գոյությունը»<sup>16</sup>, – գրել է Նժդեհը:

## Ծանոթագրություններ

- Տես Գ. Նժդեհ, Իմ պատասխանը, էջ 71:
- Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, օգոստոս, թիվ 11 (35), էջ 89:
- Տես Գ. Նժդեհ, Ցեղի ոգու շարժը, Սոֆիա, 1932, էջ 32:
- \* Ակատի ուկի Ս. Վրացյանի գլխավորած Փրկության կոմիտեն:
- ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 71, թ. 11:
- Տես Ս. Վրացյան, Կեանքի ուղիներով: Դեպքեր, դեմքեր, ապրումներ, հատոր 2, էջ 178:
- Տես Գ. Նժդեհ, Իմ պատասխանը, էջ 30 (տողատակ):
- Տես ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 150, տես նաև Յ. Իրագել, Աշխ., էջ 16, Ս. Վրացյան, Կեանքի ուղիներով: Դեպքեր, դեմքեր, ապրումներ, հատոր 2, էջ 235, Գ. Նժդեհ, Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, օգոստոս, թիվ 10 (34), էջ 139:
- ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 11 և շրջերես:
- Ս. Վրացյան, Կեանքի ուղիներով: Դեպքեր, դեմքեր, ապրումներ, հատոր 2, էջ 233:
- Նույն տեղում, էջ 234:
- Նույն տեղում:
- Ս. Վրացյան, Կեանքի ուղիներով: Դեպքեր, դեմքեր, ապրումներ, հատոր 2, էջ 235:
- ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 59:
- Տես Գ. Նժդեհ, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 80:
- Տես Գ. Նժդեհ, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը, «Հայրենիք», 1923, հունիս, թիվ 8, էջ 81:
- Նույն տեղում:

**ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ**  
**ՀԱՏՎԱԾ «ՉԱՆԳԵՉՈՒՐԻ ԳՈՅԱՍԱՐՏԸ 1917-1921 ԹԹ.» ՍԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

# Սյունիքը մեծ մարտահրավերի դեմ հանդիման. «Թրամփի ուղի» անվամբ փաթեթավորված «Չանգեզուրի միջանցքի» իրական ելույթունը


## Սկիզբը՝ էջ 1

լոր տնտեսական և տրանսպորտային կապերը: Չայաստանի Յանապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Յանապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի հնքնավար Յանապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները: Նույն կետում նշված էր նաև, որ «Կողմերի միջև համաձայնեցմամբ՝ ապահովվելու է Նախիջևանի հնքնավար Յանապետությունն Ադրբեջանի շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների շինարարությունը»: Արցախյան հիմնահարցին վերաբերող այս փաստաթղթում Ադրբեջան-Նախիջևանի հաղորդակցության հիշատակումը վկայում էր այն մասին, որ Ադրբեջանի և պատերազմի փաստացի կողմ հանդիսացող Թուրքիայի համար 2020 թ. պատերազմը սանձազերծելու գլխավոր նպատակների թվում է եղել ոչ միայն Արցախի օկուպացումը և ուժի գործադրմամբ այդ հարցի լուծումը, այլև Թուրքիա-Նախիջևան-Ադրբեջան ցամաքային կապի ստեղծումը, որը երբեք դուրս չի եկել թուրք-ադրբեջանական քաղաքական օրակարգից և, հետևաբար, ստեղծված իրավիճակը թույլ է տվել կրկին փորձել հասնել իրենց համար բացառիկ առաջնահերթություն ունեցող այդ խնդրի լուծմանը:

Չայատարության մեջ տեղ գտած «երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժ» արտահայտությունն Ադրբեջանը և Թուրքիան մեկնաբանում են որպես «ճանապարհային միջանցք», այն է՝ Ադրբեջանի երկու հատվածներն իրար կապող ճանապարհ, որն ունենալու է հատուկ կարգավիճակ և դուրս է լինելու Չայաստանի Յանապետության վերահսկողությունից («պարտատարածքային միջանցք»): Նշված ճանապարհին հատուկ կարգավիճակ հաղորդելու թուրք-ադրբեջանական պնդումների համար ևս մեկ կոճակ է հանդիսանում այն, որ համաձայն 9-րդ կետի՝ այդ ճանապարհի վերահսկողությունն իրականացվելու է երրորդ ուժի (տվյալ դեպքում՝ ՌԴ), այլ ոչ թե Չայաստանի Յանապետության կողմից: Վերը նշված այս երկու հանգամանքները, ինչպես նաև ձևակերպումների ոչ հստակությունն օգտագործելով՝ Ադրբեջանը և Թուրքիան արհեստականորեն առաջ բերեցին «Չանգեզուրի միջանցք» տերմինը և սկսեցին ոչ միայն իրենք լայնորեն կիրառել այն, այլև ջանքեր գործադրել, որպեսզի այն դառնա միջազգային բանակցությունների, քննարկումների խոսույթի մաս: Թուրք-ադրբեջանական պատկերացումների համաձայն՝ նեղ իմաստով «Չանգեզուրի միջանցքը» ենթադրում է հատուկ կարգավիճակ ունեցող ճանապարհ, որը կկապի Նախիջևանի Ադրբեջանին, իսկ ավելի լայն իմաստով ենթադրում է Սյունիքի խոչընդոտի վերացումը և դրանով Չարավային Կովկասում թուրք-ադրբեջանական լիարժեք ցամաքային կապի և գերակայություն հաստատելու ծրագիրը:

### «Միջանցք» եզրույթի էվոլյուցիայի ժամանակագրությունը թուրքական ՉԼՄ-ներում

Չայաստանի Յանապետության տարածքով Նախիջևանի Ադրբեջանին կապող ճանապարհի մասին առաջին խոսակցությունները հայտնվեցին 2020 թ. Արցախյան պատերազմի ընթացքում: 2020 թ. հոկտեմբերի 4-ին, երբ դեռ ռազմաճակատի մեծ մասում իրավիճակը շարունակում էր գտնվել հայկական բանակի վերահսկողության ներքո, թուրք հայտնի քաղաքական գործիչ, Թուրքիայի իշխող «ժողովրդական դաշինքի» անդամ հանդիսացող Ազգայնական շարժում կուսակցության (MHP) առաջնորդ Դևլեթ Բահչելին հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Չարավայում եմ, որ անկայանսորեն տրորելու ենք օձի գլուխը: Այս գարգացումների համատեքստում պարտադիր պայան է, որ Նախիջևանի հնք-



նավար Յանապետությունը կապվի Ադրբեջանի Յանապետությանը, դա պատմական անհրաժեշտություն է, շուտափույթ մի կարիք. թերևս կարելի է ասել, որ կյանքի-մահվան հարց է: Այս միավորման արդյունքում որպես մեկ ձայն, մեկ շունչ, մեկ սիրտ պայքար կնդվի թշնամու դեմ»: Պատերազմական օրերին թուրք գործի կողմից արված այս հայտարարությունը մեծ ուշադրության չարժանացավ և ընկալվեց որպես հերթական քարոզչական դրվագ: Անհրաժեշտ է նշել նաև, որ Բահչելիի խոսքում չէր օգտագործվել «միջանցք» բառը: Սակայն պատերազմի ավարտից անմիջապես հետո տեղի ունեցած իրադարձությունները փաստում են, որ Դ. Բահչելիի վերոնշյալ հայտարարությունը պատահական չէր և բացահայտում էր Թուրքիայի համար Արցախյան պատերազմում հետապնդված գլխավոր նպատակներից մեկը, այն է՝ ուղիղ անխոչընդոտ ցամաքային կապ ապահովել Ադրբեջանի հետ:

Ադրբեջանի հետ ցամաքային անխոչընդոտ կապի մասին հաջորդ հիշատակումները և քննարկումները մեկնարկեցին 2020 թ. նոյեմբեր 9/10-ի եռակողմ հայտարարության ստորագրումից և լայնածավալ ռազմական գործողությունների դադարեցումից անմիջապես հետո: Չեռապատերազմյան առաջին օրերին այդ գործում էական դերակատարում ունեցան թուրքական խոշորագույն մեդիաները, որոնք թե՛ թուրքական ու ադրբեջանական, թե՛ արտասահմանյան լատինալիս ռուղված իրենց բազմաթիվ նյութերում սկսեցին հետևողականորեն անդրադառնալ «Նախիջևանը Ադրբեջանին միացնող միջանցքին»:

Ընդ որում, տեղեկատվական այդ արշավը ցամաքային կապի գաղափարը ներկայացնում էր որպես կայացած փաստ և եռակողմ հայտարարության գլխավոր ձեռքբերումներից մեկը: Մեդիա արշավը մեկնարկեց նոյեմբերի 11-ին, երբ պետական ու մերձիշխանական համապետական պարբերականների մի զգալի մասը, անդրադառնալով «Ղարաբաղում ձեռքբերված համատեղ հաղթանակին», անկայման նշում էր Թուրքիա-Ադրբեջան ցամաքային կապի ձևավորման «իրողությունը»: Այդ նյութերի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից որոշներում քարոզչական ուղերձների թվում «միջանցքի»

գաղափարը կենտրոնական տեղ էր զբաղեցնում: Այսպես, մերձիշխանական «TGRТ Haber» հեռուստաընկերությունը նոյեմբերի 11-ին իր լրատվական թողարկման ռեպորտաժներից մեկը վերնագրել էր «Թուրքիան ցամաքային ճանապարհով միանում է Ադրբեջանին»: Նույն օրը հեղինակավոր «Milliyet» թերթի «Թուրքական աշխարհը գրկախառնվեց» վերնագրով խմբագրական հոդվածի ենթավերնագրում նշվում էր, որ «Նախիջևանի ու Ադրբեջանի միջև Չայաստանի տարածքներով նախատեսվող միջանցքն առաջին անգամ ցամաքային ճանապարհով կմիավորի Թուրքիան և Ադրբեջանը»: Մերձիշխանական «Türkiye օրաթերթի խմբագրականը վերնագրված էր «Միջանցք դեպի Բաքու», որի հիմնական շեշտը հետևյալն էր. «Թուրքիան Ղարաբաղի տարածքով կապվելու է Միջին Ասիայի հետ՝ մեծացնելու է տարածաշրջանում իր հզորությունը»: Նույն օրը եռակողմ համաձայնագրում «Նախիջևանի հետ միջանցքի բացումը» ձեռքբերում է համարում նաև պահպանողական ու իսլամամետ «Karar» օրաթերթը: Օրվա խմբագրականներում միջանցքի մասին նույնաբովանդակ հիշատակումներ էին առկա նաև այլ՝ ավելի փոքր տարածում ունեցող պարբերականներում և թերթերում: Կարևոր է նաև արձանագրել, որ «միջանցքի» հարցում վերոնշյալ դիրքորոշումն առկա էր քաղաքական դաշտի գրեթե բոլոր բևեռները ներկայացնող ՉԼՄ-ներում, ինչը թույլ է տալիս պնդել, որ դա այս հարցում առկա թուրքական ընդհանուր մոտեցումն է: Պետք է հավելել, որ այդ խմբագրականները մեծամասամբ ուղեկցվում էին նաև համապատասխան քարտեզներով, որոնցում որպես «միջանցք» էր ցուցադրվում Սյունիքի ամբողջ հարավային հատվածի վրայով անցնող ուղին:

Չաջորդող օրերին և շաբաթներին թուրքական պետական և մերձիշխանական մեդիան ակտիվորեն շարունակեց «միջանցքի» գաղափարի հանրայնացումը՝ հնարավոր բոլոր ձևաչափերով: Այսպես, նոյեմբերի 12-ին թուրքական պետական TRT հեռուստաալիքն ուղիղ եթերում անդրադարձ կատարեց «Նախիջևան-Ադրբեջան միջանցքին»: Եթերին միացած թուրք լրագրող Ջ. Մուսլուլուն Նախիջևան-Չայաստանի Յանապետություն սահմանային փակ անցակետի մոտակայքից

ներկայացնում էր նշված տարածքը որպես վերոնշյալ միջանցքի մեկնակետ, իսկ եռակողմ հայտարարության 9-րդ կետը՝ որպես «Թուրքիան և Ադրբեջանը առաջին անգամ իրար միացնող ռազմավարական ցամաքային ճանապարհ»: Նոյեմբերի 14-ին Թուրքիայի պետական «Anadol» լրատվական գործակալությունը հրապարակեց «Նախիջևանի միջանցքով կստեղծվի Թուրքիա-Միջին Ասիա գիծը» վերլուծական հոդվածը, որում հեղինակը պնդում էր, որ «Լեռնային Ղարաբաղի օպերացիան ավարտող համաձայնագրի ամենակարևոր նվաճումը Նախիջևանի և Ադրբեջանի միջև միջանցքի ստեղծումն է», որի շնորհիվ Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի միջև աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական իմաստով նոր շրջանակով է բացվելու:

Վերոնշյալ ժամանակահատվածում նմանօրինակ բազմաթիվ այլ հրապարակումներ և տեղեկատվական նյութեր էին հայտնվում թե՛ տեղական, թե՛ համապետական նշանակության թուրքական ՉԼՄ-ներում: Չաշվի առնելով Թուրքիայի մեդիա դաշտի առանձնահատկությունները, և մասնավորապես իշխանությունների կողմից տարբեր միջոցներով տեղեկատվական դաշտի վրա գրեթե լիարժեք վերահսկողություն ունենալու փաստը՝ կարելի է պնդել, որ «միջանցքի» շուրջ առկա տեղեկատվական արշավը ոչ թե պատահականության, այլ պետական քարոզամեթոսային կողմից նախաձեռնված և համակարգված գործողությունների արդյունք էր: Արշավի կազմակերպման արագությունից կարելի է նաև եզրակացնել, որ այն ծրագրվել էր նոյեմբերի 9-ի իրադարձություններից շատ ավելի վաղ և ՉԼՄ-ները, ըստ ելույթի, նախապատրաստված էին ու օպերատիվ կերպով ընդգրկվեցին գործընթացում:

### «Չանգեզուրի միջանցք»-ի սահմանների և պատմական ենթատեքստի թուրքական պատկերացումները

Չեռապատերազմական առաջին օրերին Ադրբեջան-Նախիջևան-Թուրքիա ցամաքային կապի և ընդհանուր սահմանի մասին թուրքական և ադրբեջանական հրապարակումներում այդ հաղորդակցային գիծը նկարագրելու համար օգտագործվում էին տարաբնույթ տերմիններ՝ «միջանցք դեպի Բաքու», «Նախիջևանի միջանցք», «Չանգեզուրի գիծ», «Մեդիի միջանցք», «Նախիջևան-Ադրբեջան միջանցք» և այլն: 2020 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին թուրք-ադրբեջանական խոսույթում ավելի հազվադեպ կարելի էր հանդիպել «Չանգեզուրի միջանցք» եզրույթը, սակայն ավելի ուշ՝ 2021 թվականից սկսած, այն դառնում է Թուրքիայի և Ադրբեջանի թե՛ պետական, թե՛ հասարակական-քաղաքական խոսույթում կիրառվող հիմնական արտահայտությունը:

«Չանգեզուրի միջանցք» անվան ընտրությունը և պաշտոնականացումը պատահական չեն, քանի որ ժամանակակից Թուրքիայում և Ադրբեջանում այն պարունակում է խոսույթային որոշակի իմաստներ և օգտագործվում է կոնկրետ համատեքստում: Մասնավորապես, թուրքական գիտական և քաղաքական ավանդույթում Սյունիքի մարզը (Չանգեզուրը) ներկայացվում է որպես «թուրքական Նախիջևանի» և Ադրբեջանի միջև գտնվող «պատմական թյուրքական երկրամաս», որը վերածվել է թյուրքական աշխարհի իրարից բաժանող գործոնի՝ սեպի: Ընդ որում, այս խոսույթն առկա էր արդեն 1920-ականներին, երբ հաստատվեցին Չարավային Կովկասի սահմանները: Նշված տրամաբանության հիման վրա «Չանգեզուրի միջանցք» ասելով հասկացվում է ոչ թե Սյունիքի մարզի հարավային շրջանները կամ որևէ առանձին վերցրած ճանապարհ, այլ նկատի է առնվում ողջ Սյունիքի տարածքը:

Դա են հաստատում թուրքական և ադրբեջանական գիտական, փորձագիտական, ինչպես նաև քաղաքական տարաբնույթ աղբյուրներում հրապարակված քարտեզները, որոնց մի զգալի մասում «Չանգեզուրի միջանցք» գրությունը վերագրվում է ոչ թե առանձին ճանապարհի, այլ ՀՀ Սյունիքի մարզին ամբողջությամբ:

Թուրքիայում 2020 թ. նոյեմբերից մեկնարկված քաղաքական և գիտական/ փորձագիտական քննարկումներում «Չանգեզուրի միջանցքի» համատեքստում պարբերաբար ու առանձնահատուկ կերպով հիշատակվում է նաև 1921 թ. Մուսաֆա Քեմալի



Լ կողմից Նախիջևանի պատկանելության հարցի կարևորումը, դրա համար մղված պայքարը: Մասնավորապես, ըստ գերակա խոսույթի՝ մեր օրերում «միջանցքի» բացումը հնարավոր է Աթաթյուրքի ռազմավարական հեռատեսության շնորհիվ, ով Նախիջևանը դիտարկելով որպես «թյուրքական դարպաս», արել է անհրաժեշտ Նախապատրաստական աշխատանքը, ինչն էլ այսօր թույլ է տալիս ստանալ «անխոչընդոտ ցամաքային կապ» Թուրքիայի և Ադրբեջանի ու թյուրքական աշխարհի միջև:

Այս տեսանկյունից խոսում է Թուրքիայի խորհրդարանում Ազգայնական շարժում կուսակցության (MHP) խմբակցության անունից հանդես եկող պատգամավոր Ի. Օզդեմիրի ելույթը, ով «միջանցքի» մասին խոսելով որպես կայացած փաստ, իր խոսքում նշել էր. «Փառք Աստծո, 1921 թ. հիմնադրված և Ներկայիս տեսքը պահպանած Թյուրքական դարպասը, որի հանդեպ Աթաթյուրքը մեծ ուշադրություն էր ցուցաբերել, հարյուր տարի անց բացվեց, և Թյուրքական աշխարհը փաստացի միմյանց միանալու և գրկախառնվելու հնարավորություն գտավ: ...Յարյուր տարի առաջ գործարկված ջանքն այսօր հասավ իր Նպատակին»: Անդրադառնալով 1920- 1930-ականներին Քեմալ Աթաթյուրքի՝ կովկասյան ուղղությամբ իրականացված բազմաթիվ փորձերը՝ նմանատիպ ձևակերպում է տվել գեներալ Իթեր Բաշբուրը. «Սուլթաֆա Քեմալի այս քայլերը նրա հեռատեսության, այսինքն՝ տեսլական ունեցալու անհավատարի օրինակներն են: ... 1921 թ. Աթաթյուրքի կատարած քայլերը, ցանած սերմերն այսօր՝ շուրջ 100 տարի անց, տալիս են իրենց արդյունքները»: Քեմալ Աթաթյուրքի և «թյուրքական աշխարհի» հիշատակումը հավելյալ իմաստ ու լեգիտիմություն է հաղորդում «միջանցքին»՝ այդպիսով այն տեղավորելով թե՛ պանթյուրքական խոսույթում, թե՛ բեմախառն ազգայնամոլական պայքարի շրջանակում՝ որպես «նպատակ, որի հիմքերը դրել է Աթաթյուրքը»:

**«Միջանցքի» բացումը՝ պետական բաղաբանություն, Նախապայման և սպառնալիք**

Թուրքիայի և Ադրբեջանի մեղիա դաշտում անհրաժեշտ տեղեկատվական արշավին զուգահեռ «միջանցքի» թեմային սկսեց անդրադառնալ Թուրքիայի ռազմաքաղաքական բարձրագույն ղեկավարությունը: Թուրքիայի Նախագահ Ռ. Թ. Էրդողանի կողմից Նախիջևան-Ադրբեջան «միջանցքի» մասին առաջին հիշատակումը եղել է 2020 թ. նոյեմբերի 10-ին: ՌԴ Նախագահ Վ. Պուտինի հետ հեռախոսազրույցում Նախագահ Էրդողանն ընդգծել էր «Ադրբեջան-Նախիջևան միջանցքի բացման» կարևորությունը: Հաջորդ օրը Թուրքիայի խորհրդարանի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ/ԱԿՔ) խմբակցության նիստում Էրդողանը ևս մեկ անգամ անդրադարձավ «միջանցքին»՝ հայտարարելով, որ «սպառնալիք է Ադրբեջանի ու Նախիջևանի միջև հարողակցային կապը և այդ Նախատևկով նոր ճանապարհ է կառուցվելու»: Օրեր անց իր մեկ այլ ելույթում Էրդողանը նշում էր, որ «միջանցքի շնորհիվ Թուրքիան և Ադրբեջանը կհասնեն անխոչընդոտ ցամաքային կապի»: Հաջորդիվ իր բազմաթիվ ելույթներում Նախագահ Էրդողանը պարբերաբար անդրադառնալով է «միջանցքի» թեմային՝ դրա համար օգտագործելով տարբեր բնորոշումներ:

Նախագահ Էրդողանից զատ «միջանցքի» թեմայով ելույթներ են ունեցել բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ: Այդ ելույթների ու հայտարարությունների բովանդակայական վերլուծությունը ցույց է տալիս, որ «միջանցքի բացումը» արձանագրվում է որպես Արցախյան պատերազմում Թուրքիայի ամենամեծ (կամ գլխավոր) ձեռքբերում: Այս տեսանկյունից հատկապես առանձնանում են Թուրքիայի խորհրդարանում թեմայի առնչությամբ առկա քննարկումները: Հատկանշական է, որ դրանց մասնակցում են բոլոր՝ այդ թվում և՛ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորները, և աջակցություն հայտնում իշխանության կողմից առաջարկված միասնական օրակարգին: Խորհրդարանական այս քննարկումներում պատգամավորների կողմից «Նախիջևանի միջանցք», «Չանգեզուրի գիծ» և այլ նմանատիպ արտահայտություններին զուգահեռ առաջին անգամ կիրառվել է նաև կոնկրետ «Չանգեզուրի միջանցք» եզրը: Այսպես, 2020 թ. նոյեմբերի 10-ին Թուրքիայի խորհրդարանի հերթական նիստում ընդդիմադիր «Լավ» (İYİ) կուսակցության պատգամավոր Ա. Ա. Անդիջանն իր ելույթում նշեց. «Գիտե՞ք, որ Հայաստանը երեկ հանձնվեց, և հանձնվելու պայմանների մեջ մի շատ կարևոր բան կա, և դա հետևյալն է. հայերն ընդունել են, որ Նախիջևանի և Ադրբեջանի միջև «Չանգեզուրի միջանցքը» բացվի: Սա շատ մեծ իրադարձություն է, Թուրքիայի Հանրապետության, թյուրքական պետությունների տեսանկյունից կարևոր է»:

Նույն օրն իշխող ԱԶԿ խմբակցության անունից ելույթ ունեցող պատգամավոր Մ. Էրդողանը, անդրադառնալով միջանցքին, հայտարարեց. «Այսօր Ղարաբաղում էլ շատ լուրջ զարգացումներ են եղել: Այնտեղ ամենակարևոր իրադարձություններից մեկը Նախիջևանի և Ադրբեջանի միջև միջանցքի ձևավորումն է: Հարգելի ընկերներ, այս միջանցքը չափազանց կարևոր է, քանի որ վերացնում է այն արգելքը, որը հայտնվել է միայն վերջին 100 տարում և որը բաժանում է Անատոլիան Կովկասից: Սրանից հետո մենք դեպի Կովկաս գնալու ենք ոչ միայն Կրասնավոդսկ, այլև Նախիջևանով, Ադրբեջանով և Հայաստանի միջանցքով»: Մի քանի օր անց՝ նոյեմբերի 17-ին տեղի ունեցած խորհրդարանական մեկ այլ քննարկման ժամանակ դարձյալ անդրադարձներ են եղել «միջանցքի» հարցին՝ ընդգծելով դրա կարևորությունը Թուրքիայի համար: Միաժամանակ նշվում էր, որ «Թուրքիան և Ադրբեջանը պետք է գործարդեն անհրաժեշտ կոյուբակներ և ոչ կոյուբակներ բոլոր ջանքերը, որպեսզի 40-45 կիլոմետրանոց այդ ճանապարհը կառուցեն»:

Նույն ժամանակահատվածում Թուրքիայի ռազմաքաղաքական վերահսկվող հետ զուգահեռ միջանցքի մասին է սկսում խոսել նաև Ադրբեջանի Նախագահը՝ հայտարարելով. «Պատերազմի արդյունքներից մեկը, իհարկե, Չանգեզուրի միջանցքն է, որն այսօրվա քննարկումների թեման է: Չանգեզուրի միջանցքը պատմական նվաճում է: Այս հարցն առանձնահատուկ կերպով արտացոլված է եռակողմ հայտարարության մեջ, ինչը միաժամանակ մեր մեծ բաղաբանական հարցն է: Ներկայումս ընթանում է ակտիվ աշխատանք «Չանգեզուրի միջանցքի» գործունեության ուղղությամբ, կան շատ առաջարկներ, բազմաթիվ տրանսպորտահաղորդակցային նախագծեր արդեն սեղանին են, քննարկվում են, ինչը և դառնալու է մեր հերթական պատմական հաջողությունը»: «Միջանցքի» հարցը Ալիևը դիտարկում է անցյալի, ներկայի և ապագայի տիրույթում նշելով. «Չանգեզուրի միջանցքի ստեղծումն ամբողջությամբ համապատասխանում է Ադրբեջանի ազգային, պատմական ու ապագա շահերին»: Ավելորդ է նշել, որ Ադրբեջանի իշխանությունների այս խոսույթի բարդումը և հանրայնացման ամբողջությամբ լծված են տեղական ԶԼՄ-ները:

Հարկ է փաստել, որ արդեն 2020 թ. նոյեմբեր-դեկտեմբերին «միջանցքը» դարձել էր թե՛ Թուրքիայի, թե՛ Ադրբեջանի պաշտոնական հռետորաբանություն, մամուլի, փորձագիտական խոսույթի կարևոր մասը: Ընդ որում, Թուրքիայում և Ադրբեջանում «միջանցքը» լոկ հռետորաբանություն չէ, այլ հստակ պետական բաղաբանություն կարևոր բաղաբանություն էր, որի ուղղությամբ սկսեցին հետևողական քայլեր արվել: Մասնավորապես՝ Իլհամ Ալիևը խոսելով կոնկրետ բաղաբանական ծրագրերից՝ հայտարարեց. «Նոր նախագծերից են կցանկանալի նշել Չանգեզուրի միջանցքը: Այս նախագիծն առաջ է բաշխվել Ադրբեջանի կողմից: Ղարաբաղյան երկրորդ պատերազմում մեր հաղթանակից հետո այս հարցը մտցվել է միջազգային օրակարգ, միջազգային բառապաշար, և այսօր «Չանգեզուրի միջանցքը» աշխարհում համընդհանուր ընդունված արտահայտություն է, տերմին է: Եվ իհարկե, մենք իրականացնում ենք այրակտիվ քայլեր միջանցքի բացման համար»: 2021 թ. հունիսին Թուրքիայի Նախագահ Էրդողանը հայտարարում էր, որ ««Չանգեզուրի միջանցքը» մեծ կարևորություն ունի», իսկ արդեն 2023 թ. նշում էր, որ. «...վայրկյան առաջ այս միջանցքի բացման համար անելու ենք մեր ձեռքից եկածը: Թուրքիայի և Ադրբեջանի համար շատ կարևոր այս միջանցքի իրականացումը ռազմավարական հարց է և անպայման պետք է ամբողջացվի»: 2023 թ. հուլիսին Ադրբեջանի Նախագահ Ի. Ալիևի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ Էրդողանը հայտարարեց. «Չանգեզուրի հարցը արագ լուծելը... կնպաստի երկու երկրների հարաբերությունների հզորացմանը»: Իր մեկ այլ ելույթում Էրդողանը, անդրադառնալով «միջանցքին», հայտարարում էր. «Օրը կգա, երբ Չանգեզուրից դուրս կգանք և կկարողանանք գալ Ստամբուլ»:

Բացի Նախագահներից, Թուրքիայի և Ադրբեջանի բազմաթիվ այլ պաշտոնյաներ նույնպես արտահայտվել են «միջանցքի» մասին, որպես իրենց երկրների համար գերկարևոր բաղաբանական խնդիր: Օրինակ՝ 2021 թ. մայիսի 25-ին Ադրբեջանի խորհրդարանի տարածաշրջանային հարաբերությունների հանձնաժողովի Նախագահ Ս. Նովրուզովը հայտարարեց, որ պատերազմից հետո Ադրբեջանի առջև կանգնած 4 հիմնական խնդիրներից մեկը «ինչ գնով էլ լինի՝ Չանգեզուրի միջանցքի բացումն է», որին պետք է ծառայեն Ադրբեջանի բոլոր ջանքերը:

Հարկ է նշել, որ 2021 թ. հունիսի 15-ին օկուպացված հայկական Շուշիում Թուրքիայի և Ադրբեջանի Նախագահների կողմից ստորագրվեց «Շուշիի հռչակագիրը», որի կետերից մեկում ասվում է հետևյալը. «Կողմերը հայտնում են, որ Թուրքիան ու Ադրբեջանը միավորող Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Ադրբեջանի Հանրապետության Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև միջանցքի («Չանգեզուրի միջանցք») բացումը և որպես վերոնշյալ միջանցքի շարունակություն Նախիջևան-Կարս երկաթգծի կառուցումը ներդրում կունենան երկու երկրների միջև տրանսպորտային հաղորդակցային հարաբերությունների խորացման համար»: Միաժամանակ, «Շուշիի հռչակագրով» «Չանգեզուրի միջանցք» եզրույթին տրվեց «կարգավիճակ», ինչից հետո այն դարձավ թե՛ թուրքական, թե՛ ադրբեջանական պետական-պաշտոնական հռետորաբանության մեջ կիրառվող գլխավոր տարբերակը, որը մեխանիզմներ են զարգացնում ունեցավ հանրային, փորձագիտական և մեդիայի խոսույթում:

Թուրքիայի և Ադրբեջանի հարավկովկասյան բաղաբանության համար «Չանգեզուրի միջանցքի» գերկարևորություն մասին է վկայում այն փաստը, որ այն վերածվել է Հայաստանի հետ վարվող բանակցությունների գլխավոր Նախապայմաններից մեկին, և չնայած որ Հայաստանից բազմիցս հնչել է պաշտոնական հայտարարություն առ այն, որ դեմ են «միջանցքային տրանսպորտամբ» որևէ նախաձեռնության, սակայն թուրք-ադրբեջանական հռետորաբանության մեջ այդ հարցը ներկայացվում է իբրև թե Հայաստանի կողմից տրված խոստում: Արցախի ամբողջական օկուպացիայից հետո՝ 2023 թ. սեպտեմբերի 19-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում ունեցած իր ելույթում Էրդողանը հայտարարեց, որ «սպասում ենք, թե երբ է Հայաստանը կատարելու իր խոստումները՝ առաջին հերթին «Չանգեզուրի միջանցքի» բացումը»: Մի քանի օր անց Էրդողանը ևս մեկ անգամ հայտարարեց, որ «միջանցքի» բացումը դիվանագիտական հարաբերությունների հաստատման Նախապայման է. «Ես կցանկանալի ևս մեկ անգամ ընդգծել, որ մենք պատրաստ ենք Հայաստանի ղեկավարության հետ քայլ առ քայլ զարգացնել մեր հարաբերությունները, եթե այն սկսի կատարել իր խոստումները: Մասնավորապես, խոսքը «Չանգեզուրի միջանցքի» բացման մասին է»: Ավելի ուշ՝ 2024 թ. հուլիսին Էրդողանը նշում էր, որ ««Չանգեզուրի միջանցքի» բացումը խաղաղության համաձայնագրի վերջնական, այն ամփոփող քայլն է:

... Ադրբեջանի, Ալիևի համար այդ միջանցքը շատ կարևոր է»:

«Միջանցքի» հարցը որպես Հայաստանին ներկայացվող թուրք-ադրբեջանական Նախապայման բացահայտ և լայնորեն տարածված է այդ երկրների բաղաբանական շրջանակներում: Այդպիսի օրինակ է Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր «Լավ» կուսակցության անունից հանդես եկող Ա. Անաթ Անդիջանի ելույթը, որում նա ևս նշում է միջանցքը որպես Հայաստանի հետ սահմանների բացման գլխավոր Նախապայման. «Հարգելի գործընկերներ, ես ձեր այն ընկերն եմ, որ 1996 թ. կառավարության ծրագրում մտցնել էմ տվել այն հողվածքը, որ «Քանի դեռ Ադրբեջանը չի հաստատել, որ Ղարաբաղի հարցը լուծված է, Թուրքիան չի բացելու այդ (ՀՀ հետ – հեղ.) սահմանը»: Ավելի ուշ, երբ Նախարար էի, դա գրել եմ տվել նաև 55-րդ կառավարության ծրագրում: Իսկ այժմ, ճակատագրական կետը հետևյալն է: Այդ սահմանի բացումը Թուրքիան պետք է տեղափոխի այլ հարթակ և պետք է սպի, որ.

*«Չանգեզուրի անցումի բացման դեպքում ես կբացեմ այս սահմանը: Իսկ եթե հարց ունեք Չանգեզուրի՝ այսինքն Ադրբեջանը Նախիջևանին միացնող ճանապարհի թեմայով, ապա սահմանները բացելու տարբերակ չկա: Սա պետք է ասվի և մի բան պետք է արվի»:*

Այդ համատեքստում, բացի Նախապայմաններ առաջ բաշխելը, Թուրքիան և Ադրբեջանը հնչեցնում են նաև սպառնալիքներ՝ ուղղված «միջանցքի» բացման դեմ հարուցվող «հնարավոր բոլոր խոչընդոտներին»: Այսպես, 2021 թ. մարտի 5-ին Ադրբեջանում իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության համագումարում Նախագահ Ալիևը հայտարարեց, որ «Այսօր Հայաստանը խուսափում է համագործակցությունից: Փորձում է խանգարել «Չանգեզուրի միջանցքի» իրականացմանը: Բայց չի հաջողելու: Մենք կստիպենք, կստիպենք: Մենք կհասնենք մեր առջև դրված Նախատեսվածին, ինչպես որ նրանց վնդեցինք մեր հողերից»: Հետագա հայտարարություններում սպառնալիքներն ավելի բացահայտ և սուր բնույթ էին կրում և Ադրբեջանի Նախագահի կողմից պարբերաբար հնչում են հարցը՝ ուժով լուծելու հայտարարություններ. «Մենք կիրականացնենք Չանգեզուրի միջանցքը, ուզում է դա Հայաստանը, թե ոչ: Եթե կուզի, ապա ավելի հեշտությամբ կլուծենք, եթե չուզի, կլուծենք ուժով: Այնպես, ինչպես մինչև պատերազմը և դրա ընթացքում ես ասում էի, որ նրանք (հայերը խմբ.) իրենց կամբով պետք է կորչեն հեռու մեր հողերից և երբ մենք ուժով նրանց կվնդեցնենք: Այդպես է կոչվել: Այդպիսին է կլինի Չանգեզուրի միջանցքի ճակատագիրը»: 2025 թ. հունվարին Ալիևը հայտարարեց, որ «Չանգեզուրի միջանցքը պետք է բացվի և կբացվի: Որքան շուտ նրանք (հայերը – հեղ.) դա հասկանան, այնքան լավ: Մենք չենք կարող մնալ նման իրավիճակում: Ինչո՞ւ մենք պետք է երթենք նախիջևան, որն Ադրբեջանի անբախտելի մասն է, տարբեր ուղիչ ճանապարհներով: Մենք պետք է ունենանք ուղիղ կապ... Արդեն ավելի քան 4 տարի մենք համբերատար սպասում ենք: Արդեն ավելի քան 4 տարի մենք ուզում ենք, որ այս հարցը բանակցությունների ճանապարհով լուծվի: Որքան մենք պետք է սպասենք և ինչո՞ւ պետք է սպասենք: Այսինքն՝ նրանք դա պետք է հաշվի առնեն: Ես մի անգամ ասել եմ. չարժե, որ նրանք մեզ կարողանան, և նրանք պետք է հասկանան, որ այստեղ ծայրի իրավունքը մեզ է պատկանում: Ադրբեջանը Հարավային Կովկասում առաջատար տնտեսություն է, առաջատար ռազմական ուժ է առաջատար պետություն: Ժամանակակից աշխարհում ուժի գործոնն առաջնային պլանում է, և ոչ մեկը չպետք է մոռանա այդ մասին»: Նկատենք և փաստենք, որ նմանատիպ սպառնալիքներ պարբերաբար հայտարարություններն ունեն պարբերական բնույթ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ հետպատերազմյան փուլում 2020 թվականից սկսած թե՛ Թուրքիան, և թե՛ Ադրբեջանը մշտապես բարձրաձայնել են «Չանգեզուրի միջանցքի» բացման անհրաժեշտության մասին՝ որպես խաղաղության և Հայաստանի հետ հարաբերությունների հաստատման Նախապայման: Հետաքրքրական է, որ թուրք-ադրբեջանական տանդեմը երբեմն դիմում է տարբեր մանևրների, օրինակ՝ առաջին շրջանում Թուրքիան պաշտոնական մակարդակում «միջանցքի գաղափարը» հաճախ ներկայացնում էր որպես «Ադրբեջանի Նախագիծ», ինչը պատմական և տարաբնույթ այլ փաստերի լույսի ներքո հերքվում է, քանի որ իրականությունը լիովին այլ է, ու դա հստակ թուրք-ադրբեջանական դարավոր ծրագիր է: Հենց Ադրբեջանից հնչող հայտարարություններն են վկայում, որ Թուրքիան մասնակից կողմ է Այսպես, 2021 թ. ապրիլին Ի. Ալիևը հայտարարել է. «Ինչպես գիտեք, այսօր մենք բանակցում ենք ապաշրջափակման և հատկապես Չանգեզուրի միջանցքի բացման համար: Չանգեզուրի միջանցքը չի կարող բացվել առանց Թուրքիայի համաձայնության և մասնակցության: Թեև Թուրքիան եռակողմ աշխատանքային խմբի անդամ չէ (Նկատի ունի ՀՀ, ՌԴ և Ադրբեջանի փոխվարչապետների խումբը), սակայն մենք տեղեկություններ ենք տրամադրում այն հարցերի շուրջ, որոնք բանակցում ենք»:

**ՈՒՐԲԵՆ ՄԵԼՈՒՅԱՆ  
ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ  
ՀԱՏՎԱԾ «ԹՈՒՐԱՆԻ ԾԱՆԱԳՐԱԳԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՍԵՂԸ. «ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆԿՑՔԻ» ՀԻՄՆԱԶԱՐԾԸ (20-21-ՌԴ ԴԱՐԵՐ)»**  
**ԳՐԵԻՑ**

# Մեղրին հռչակվել է ԱՊՅ մշակութային մայրաքաղաք

Ուրախալի և խորհրդանշական է, որ Մեղրին հենց անցյալ տարի Դուշանբեում հռչակվեց ԱՊՅ մշակութային մայրաքաղաք, և մեր պատվիրակության համար մեծ պատիվ է գտնվել այստեղ: Այդ մասին ապրիլի 16-ին «Մեղրի՝ ԱՊՅ մշակութային մայրաքաղաք» միջոցառումների շրջանակում լրագրողների հետ զրույցում հայտարարել է Տաջիկստանի մշակույթի փոխնախարար Բոբոզոդ Ֆարիդունը:

Ծրագրի պաշտոնական բացման արարողությունը տեղի է ունեցել ապրիլի 16-ին՝ ժամը 19:00-ին:

Միջոցառման նպատակն է՝ ներկայացնել քաղաքի մշակութային ժառանգությունը, ստեղծարար ներուժը և ամրապնդել մշակութային համագործակցությունը ԱՊՅ երկրների միջև:

«Մեղրին՝ ԱՊՅ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում ապրիլի 16-ին տեղի են ունեցել մի շարք այլ միջոցառումներ ևս՝

- ծառատունկ և պուրակի հիմնում ( ժամը 10:30),
- «Մեղրին՝ ԱՊՅ մշակութային մայրաքաղաք» ծրագրի բացման ասուլիս (ժամը 12:30),
- ԱՐՏԵՔՍՊՈ ցուցահանդես

Լրա խոսքով՝ Հայաստանի իրենց համար հարազատ երկիր է, բանի որ այստեղ էլ, ինչպես Տաջիկստանում, շատ են լեռները: Փոխնախարարի գնահատմամբ՝ երկու երկրների մարդիկ նման են միմյանց թե՛




մենթալիտետով, թե՛ արտաքինապես: «Մարդիկ այստեղ շատ բարի են ու անկեղծ, բնությունը հիասքանչ է: Մենք եղել ենք նաև Երևանում, Կապանում ու Ագարակում. դրանք նույնպես շատ գեղեցիկ քաղաքներ են: Ոչ բոլորը կարող են ապրել լեռներում, բայց մեծ հոգի ունեցողներին դա հաջողվում է: Ասում են՝ լեռներից բարձր միայն լեռներն են, բայց այստեղի ժողովուրդը լեռներից էլ բարձր է», – եզրափակել է նա: \* \* \*

(ժամը 16:30),

■ Մեղրին՝ ԱՊՅ մշակութային մայրաքաղաք նամակակնիշի մարում (ժամը 18:00):

Բացման միջոցառմանը մասնակցել են 33 պետական մարմինների ներկայացուցիչներ, ԱՊՅ անդամ երկրների (Ռուսաստան, Բելառուս, Տաջիկստան, Ուզբեկստան, Դրոզդստան, Ղազախստան) պաշտոնական պատվիրակություններ և մշակույթի ոլորտի գործիչներ, ԱՊՅ երկրների Գործադիր կոմիտեի և ԱՊՅ երկրների 30 մանկատար համագործակցության միջպետական հիմնադրամի ղեկավար կազմի ներկայացուցիչներ: //

Ապրիլի 16-17-ը Մեղրիում և Ագարակում իրականացվել են մշակութային բազմաբնույթ միջոցառումներ :



գեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ / Zangezur Copper Molybdenum Combine • Вы подписаны  
նվազում է «Գանձատար» ճամբարը, այն ոչ միայն ՉՊՄԿ սոցիալական խոշոր ներդրումային ծրագրերից է, այլ նաև՝ տարածաշրջանի մեջ հաճելի ինչ... Էսբե

# ՉՊՄԿ-ի նախաձեռնությամբ ու ջանքով Կապանի տարածքում կկառուցվի մանկական ամառային ճամբար

Ապրիլի 2-ին Կապանի մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից կառուցվելիք մանկական ամառային ճամբարի՝ Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման երկրորդ հանրային քննարկումը:

Բացելով հանրային քննարկումը Կապանի համայնքապետի առաջին տեղակալ Գոռ Թաղևոսյանը նշեց, որ սա «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի հերթական խոշոր սոցիալական ծրագիրն է, որն առանձնանում է իր կարևորությամբ՝ բխելով երեխաների շահերից և միտված լինելով նրանց առողջության պահպանմանն ու հանգստի կազմակերպմանը: Ընդ որում՝ այդտեղ հանգստանալու հնարավորություն կունենան ոչ միայն Կապանի, այլև Սյունիքի մարզի համայնքների երեխաները:

Ծրագրի բնապահպանական հատվածը ներկայացրեց 33 շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ 30-իկ Մետրոպոլսը:

ՉՊՄԿ-ի կայուն զարգացման գծով տնօրենի տեղակալ Ասյա Ղազարյանը ներկայացրեց ճամբարի հարկաբաժինները. 17.28 հա տարածք զբաղեցնող ճամբարը նախատեսված է 120 հոգու համար և կունենա ժամանակակից պայմաններ երեխաների հանգստի ու ժամանցի կազմակերպման համար:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը ողջունեց «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության՝ մանկական ճամբար կառուցելու նախաձեռնությունը, փաստելով, որ տարիներ շարունակ Սյունիքի մարզում



ծառացած է եղել դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման խնդիրը:

«Յուրաքանչյուրս՝ մեր կարելիությունների չափով, պիտի նպաստենք, որ այդ գեղեցիկ նախագիծը կյանքի կրչվի, և 2027 թվականի հուլիսին մարզի երեխաներն այստեղ հանգստանալու հնարավորություն ունենան, ինչպես որ նախագծված է», – ասաց նա:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# Ազգային գրադարանային շաբաթը՝ նորարարության և մշակութային ժառանգության համադրությամբ

Սյունիքի մարզային գրադարանում մեկնարկեց Ազգային գրադարանային շաբաթը, որն անցկացվում է Հայաստանի գրադարանային ասոցիացիայի նախաձեռնությամբ՝ սկսած 2002 թվականից: Շաբաթվա նպատակն է՝ ընդգծել գրքի և գրադարանի դերը հասարակության կրթամշակութային զարգացման գործում:

Միջոցառման անցկացվում է «Հայ լեզվաբանության նախապետը» խորագրի ներքո՝ նվիրված հայ մեծանուն լեզվաբան, բարբառագետ Հրաչյա Աճառյանին:

Միջոցառման զարգացման առանցքը միավորում է անցյալն ու ներկան՝ շեշտադրելով դպրոցական գրադարանների դերը որպես նորարարական կրթական միջավայր: Ժամանակակից գրադարանները վաղուց դադարել են լինել պարզապես ընթերցարահներ. այսօր դրանք կրթական հարթակներ են, որտեղ աշակերտները զարգացնում են իրենց գիտե-

լիքները, ձևավորում նոր մտածողություն և կիրառում ժամանակակից տեխնոլոգիաներ:

Միջոցառման մեկնարկը տրվեց Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցում՝ Կոմիտասի ստեղծագործության կատարմամբ՝ ընդգծելով հայկական մշակութային ժառանգության կարևորությունը:

Միջոցառման շրջանակում Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտները ներկայացրին Աճառյանի կյանքն ու գործունեությունը՝ դաստիարակչական գծով կազմակերպիչ Դիանա Բադալյանի ղեկավարությամբ:

Ելույթ ունեցավ նաև գրաբարագետ, քաղաքագետ և հասարակական գործիչ Ալեքսանդր Քանանյանը, ով իր խոսքում կարևորեց Աճառյանի դերը՝ որպես հայ լեզվաբանության հիմնադիրներից մեկը:

Միջոցառման ավարտին կազմակերպիչները շնորհակալություն հայտնեցին մասնակիցներին՝ կարևորելով նման նախաձեռնությունների շարունակականությունը:



Այս միջոցառումը ևս մեկ անգամ ցույց տվեց, որ լեզուն, գիրքը և կրթությունը միայն անցյալի արժեքներ չեն. դրանք գործող ուժ են, որոնք այսօր էլ ձևավորում են մտածո-

ղություն, պահպանում ազգային ինքնությունը և բացում նորարարության ճանապարհը: **ԻՀԱ ԱՍՏԱՏՐՅԱՆ**

# ԶՊՄԿ-ն՝ հեղինակավոր @doingdigitalforum 2026-ի մասնակից ու արդյունաբերական փոխակերպման գործընկեր

**Զ**ՊՄԿ-ն արդեն մի քանի տարի է թվայնացման ակտիվ շրջափուլում է և վերջնարդյունքում ունենալու է ժամանակակից և ամբողջովին թվայնացված կառավարման և արտադրական մոդելներ:

Բացառիկ է և պարտավորեցնող, երբ տասնյակ ֆինանսական ընկերությունների կողքին ԶՊՄԿ-ն արդյունաբերական ոլորտի միակ մասնակից ընկերությունն էր, որն ուներ ոլորտում թվայնացման վերաբերյալ արդեն ձևավորված փորձ ու հստակ տեսլական:

Պանելային քննարկման ընթացքում ԶՊՄԿ գլխավոր տնօրենի թվայնացման գծով տեղակալ Սադրկ Ազիմովը բացատրեց, որ արդյունաբերական թվայնացումը նպաստելու է արդյունավետ տնտեսության ձևավորմանը, տալու է ավելի թիրախային աշխատելու հնարավորություն, նպաստելու է թե՛ բիզնեսի և թե՛ պետության զարգացմանը և այս ամենին զուգահեռ ներկայացրեց, թե թվայնացման ինչ գործընթացներ են իրականացվել և իրականացվելու ԶՊՄԿ-ում:

**ԶԱՆԳԵՉՈՒՐԻ ՊՐԵՑԻԴԵՆՏՆԵՐԻ ԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ**  
09.04.2026



# Յյունսիս-հարավի Քաջարան-Ագարակ 32կմ կառուցվող ճանապարհահատվածում շինարարությունն ընթանում է արագ տեմպերով

**Չ**նայած անբարենպաստ եղանակային պայմաններին՝ Յյունսիս-հարավի Քաջարան-Ագարակ 32կմ կառուցվող ճանապարհահատվածում շինարարությունն ընթանում է արագ տեմպերով:

Շարունակվում են արդեն իսկ հորատված երկու թունելների բետոնապատման, հենապատերի, կամուրջների, արհեստական կառուցվածքների, սապազ մայրուղու հողային պատասառի կառուցման աշխատանքները:

Շինարարության որակը տեխնիկական հսկողություն իրականացնող թիմի և «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աշխատակիցների մշտական հսկողության ներքո է:

Չիչեցնենք, որ Յյունսիս-հարավի Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածը կառուցվում է ՀՀ կառավարության և Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

**ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



# Սյունիքում կզարգացվի ջերմատնային բիզնեսը. մեկնարկել է «NEXUS Կապան 2» ծրագիրը

**Ս**ԱԿ-ի Չարգացման ծրագրի «Կայուն համայնքներ» նախաձեռնության շրջանակում մեկնարկել է «NEXUS Կապան 2. Ջերմատնային ձեռնարկատիրության կլաստերի ընդլայնում» ծրագիրը, որի նպատակն է զարգացնել Կապան համայնքում ջերմատնային տնտեսությունները և ամրապնդել գյուղ-բաղաբ տնտեսական կապերը:

Ապրիլի 15-ին նախաձեռնությունը Կապանի բնակիչներին ներկայացրեց ՍԱԿՉ «Կայուն համայնքներ» ծրագրի փորձագետ Մխիթար Բալայանը, իսկ Կապան համայնքի ղեկավարի տեղակալ Մարատ Չարությունյանը պատասխանեց նրանց հարցերին:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է ընտրել մինչև 30 մասնակից, որոնք կանցնեն մասնագիտական և բիզնես ուսուցում: Դասընթացները կներառեն գյու-

ղատնտեսական հմտությունների զարգացում, շուկայի ուսումնասիրություն, ինչպես նաև գնագոյացման ու ֆինանսական պլանավորման հիմունքներ:

Ուսուցման փուլը հաջողությամբ ավարտած առավել պատրաստված և մոտիվացված մինչև 17 մասնակից կստանան հնարավորություն՝ համաֆինանսավորմամբ հիմնելու 300 քմ մակերեսով ժամանակակից ջերմատներ:

Նախաձեռնության նպատակն է՝ խթանել տեղական արտադրությունը և մարզային շուկան ապահովել թարմ գյուղմթերքով:

Չետաքրքրված անձինք կարող են դիմել մինչև ապրիլի 25-ը:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել դիմումի ձևը՝ կցելով համապատասխան փաստաթղթերը:

**ԻԶԱ ԱՍՏՈՏՅԱԼ**



Բաբվում և Շուշիում հայերի ցեղասպանությունը միևնույն օրս չի ստացել իրավական գնահատական, ինչը թույլ է տվել Բաբվին շարունակել ցեղասպանական քաղաքականությունը

### Սկզբը՝ էջ 1

տվել Ադրբեջանի բոլոր ժամանակների վարչակազմերին ձևավորել և ինստիտուցիոնալացնել հայատյաց ու ցեղասպան գաղափարախոսություն՝ անարգել շարունակելով ցեղասպանական քաղաքականության իրականացումն Ադրբեջանի տարածքում պատմականորեն ապրող հայերի և Արցախի բնիկ տեր հայության նկատմամբ:

Չայ ազգի նկատմամբ Ադրբեջանի իրականացրած ցեղասպանական քաղաքականությունը նկատի առնելով՝ ցեղասպանության ուսումնասիրության և կանխարգելման հարցերով զբաղվող համաշխարհային հեղինակավոր կազմակերպություններից մեկը՝ Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը, վերջերս միանգամայն իրավացիորեն Ադրբեջանին բնորոշել է որպես ցեղասպան պետություն:

Այժմ Իլիամ Ալիևի հանձնարարությունները կատարողի՝ Ադրբեջանի, այսպես կոչված, մարդու իրավունքների հանձնակատարի հիշատակած «ադրբեջանցի» ազգության մասին: Չամաձայն անհերքելի փաստերի՝ մինչև 1936 թվականը երկրագնդի վրա գոյություն չի ունեցել «ադրբեջանցի» ազգություն: 1936թ. դեկտեմբերի 5-ին «Ստալինյան Սահմանադրության» ընդունման արդյունքում Խորհրդային Ադրբեջանի բնակչությունն, անկախ իր ազգային պատկանելիությունից (թալիշներ, լեզգիներ, ուդիներ, թաթեր, ցախուրներ և այլն), կոչվեց «ադրբեջանցի», որը բառացի նշանակում է մարդ, ով բնակվում է Ադրբեջանում:

Սակայն, Ադրբեջանի վարչակազմը, «ադրբեջանցի» ասելով, հասկանում էր և այսօր էլ հասկանում է որպես ազգություն: Այսպիսով, պատմական-իրավական անժխտելի փաստերի համաձայն՝ Ադրբեջանի տարածքում ապրող տարբեր ազգային պատկանելիություն ունեցող եթևիկ խմբերի համար «Ադրբեջան» երկրի անունը 1936 թվականի վերջից սկսած դարձել է եթևոնիմ:

1918 թվականի դրությամբ «ադրբեջանցի» ազգություն գոյություն չուներ և ապա 1936 թվականից «ադրբեջանցի» կոչվելու մասին վկայել է Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարի համար, և ոչ միայն հանձնակատարի, պարտադրաբար կրոնքի վերածված Չեյդար Ալիևը նախքան 1995թ. Նոյեմբերի 12-ին Ադրբեջանի Սահմանադրության ընդունումը մտավորականության ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ, որտեղ քննարկել են, թե ովքեր են իրենք և ո՞րն է իրենց լեզուն: Չանդիպմանը Չեյդար Ալիևը, մասնավորապես, հայտարարել է. «Սկզբում մեզ անվանում էին թաթարներ, ... այնուհետև՝ 1918 թվականից հետո՝ թյուրքեր, 1936 թվականից՝ ադրբեջանցիներ: Ի՞նչ անել»:

Այսպիսով, 1918 թվականի դրությամբ ոչ միայն ներկայիս Ադրբեջանի տարածքում, այլև ողջ երկիր մոլորակի վրա գոյություն չի ունեցել «ադրբեջանցի» ազգություն: Չետևաբար, 1918 թվականին հայերը չէին կարող և չեն ենթարկել ցեղասպանության գոյություն չունեցող «ադրբեջանցիներին»:

Այս ամենի հետ միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Չայաստանի Չանրապետությունում ազգային, պետական շահերը սպասարկելու հետագիծ, ցանկություն և կարողություն ունեցող վարչակազմի ձևավորման պարագայում անհետաձգելիորեն պետք է ձեռնարկվեն գործուն քայլեր ի շարք Ադրբեջանի կողմից հայ ազգի նկատմամբ իրականացված բազմաթիվ հանցագործությունների, 1918 թվականին Բաբվում, 1920 թվականին Շուշիում, 1988 թվականին Սումգայիթում ու Գանձակում, 1990 թվականին Բաբվում, 1992 թվականին Արցախի Մարաղա գյուղում, 2020 և 2023 թվականներին Արցախի Չանրապետությունում Ադրբեջանի վարչակազմի կողմից պետական մակարդակով ծրագրված և իրականացված հայության ցեղասպանությունները միջազգայնորեն ճանաչելի դարձնելու և Ադրբեջանի պատասխանատվության ենթարկելու նպատակով:

**ՄՍԵՓԱՆ ՉԱՍԱՆ-ՉԱԼԱԼՅԱՆ**

# Մահացել է մեծանուն գրող, հրապարակախոս, Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակից Չորի Բալայանը

Մահացել է մեծանուն գրող, հրապարակախոս, արցախյան ազատագրական պայքարի ակունքներում կանգնած Չորի Բալայանը: Կա 91 տարեկան էր:

Չորի Գայի Բալայան ծնվել է 1935 թվականի փետրվարի 10-ին, Ստեփանակերտում: 1953-1957 թվականներին ծառայել է բայթյան կապիտանի ծառայության մեջ: 1963 թվականին ավարտել է Ռյազանի Ի. Պ. Պավլովի անվան բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1963-1973 թվականներին Կամուկայում աշխատել է որպես բժիշկ: 1967 թվականին, իր երկու ընկերների հետ, «Վուկան» և «Չեզեր» նավակներով Կամուկայից Օդեսա է հասել, անցնելով 22 հազար կիլոմետր տարածություն: 1970 թվականին Կամուկայից կտրել է Խաղաղ օվկիանոսը, հասել Ատլանտյան օվկիանոս: 1973 թվականի ձմռանը շնասահակով կտրել-անցել է Կամուկայի և Չուկոտկայի տունդրաները, հասել մինչև Զյուսիսային օվկիանոս: 1973-1975 թվականներին աշխատել է բուժական ֆիզիոլոգիայի հանրապետական դիսպանսերում (Երևան):



1960-1970-ականներին: Իր հեղինակած «Օ-ձախ» գրքում անդրադարձել է Զայաստանի, Նախիջևանի և Արցախի թեմային, որի համար հարձակումների է ենթարկվել ոչ միայն թուրք-ադրբեջանական պատմաբանների, այլև ԼՂԻՄ մարզկոմի ադրբեջանամետ ղեկավարության կողմից:

Եղել է 1988 թվականին ծավալված դարաբաղյան ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից ու գաղափարախոսներից մեկը: 1988-1991 թվականներին Միխայիլ Գորբաչովի, Ա. Յակովլևի և ԽՍՀՄ ԿԿ ու գործադիր իշխանությունների բարձրագույն

այլ գործիչների հետ ունեցած հանդիպումների ժամանակ, ԽՍՀՄ պատգամավորների համագումարներում, Բորիս Ելցինին հղած նամակում ներկայացրել է Արցախյան հիմնախնդիրը, ԼՂԻՄ-ում տեղի ունեցող դժբախտությունների հիմքերը, պանթուրիզմի տարածման վտանգավորությունը, պատճառաբանված և հիմնավորված ելույթներով դատապարտել Ադրբեջանի և Կեմալի կողմից կատարվող հակաօրինական, հակահայրենական գործողությունները: 1989-1992 թվականներին եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: 1990 թվականի սեպտեմբերի

20-29-ին Մոսկվայում իր հյուրանոցային համարում հայտարարել է հացադուլ՝ բողոքելով «ԼՂ-ում տեղի ունեցող անօրինականությունների և Մ. Գորբաչովի անգործության դեմ» և պահանջել, որ վերականգնվեն ԼՂԻՄ-ի իրավական-վարչական մարմինները, նրա սահմանադրական իրավունքները:

1992-1995 թվականներին եղել է ԼՂԻ Գերագույն խորհրդի պատգամավոր: 1992-1994 թվականներին ակտիվ մասնակցություն է ունեցել ռազմաքաղաքական Նշանակության հարցերի մշակման գործում, պարբերաբար եղել է ռազմաճակատի ամենաթեժ կետերում և իր ներկայությամբ ոգևորել հայ զինվորին, որի համար ստացել է «Կոմիսար» պատվանունը, եղել է բազմաթիվ արտասահմանյան երկրների կողմից Արցախյան ցույց տրվող մարդասիրական օգնության նախաձեռնողն ու կազմակերպիչը... Բայց այս ամենով հանդերձ նրա ամենամեծ առաքելությունը եղել է արցախյան ազգային-ազատագրական պայքարի միջազգայնացմանն ուղղված հիրավի նպատակալաց գործունեությունը: Իսկ դրա համար ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ հետպատերազմյան շրջանում նա օգտագործել է ոչ միայն միջազգային տարբեր հանդիպումների ու հրապարակային ելույթների ուժը, այլև «Կիլիկիա» և «Արմենիա» նավերով շուրջերկրյա ճանապարհորդություն կատարելու տարբերակը... Ճանապարհորդություն, որի ընթացքում նավերով օվկիանոսներն ու ծովերը հատում է Արցախի պետական դրոշը վեր պարզած:

YERKIR.AM  
05.04.2026

## Լարային քառյակի տոնական համերգը

Այսօր Կահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճում կայացավ Կապանի մշակույթի կենտրոնի լարային քառյակի համերգը՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին:

Աշոտ Խաչատրյանի ղեկավարությամբ քառյակն այս անգամ ևս երաժշտասեր հանրությանը ներկայացավ նոր ծրագրով. հիշեցին Դմիտրի Շոստակովիչի, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի, Կոմիտասի, Առնո Բաբաջանյանի, Աստոր Դիաղովայի և Յոհան Շտրաուսի ստեղծագործությունները:

Հատկանշական էր, որ երեկոյի ընթացքում լարային քառյակի հետ միասին նույն բեմում ելույթ ունեցան նաև Կապանի արվեստի պետական քոլեջի ուսանողները:



Համերգն արժանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելությանը՝ ուղեկցվելով երկա-

րատև և հոտնկայա ծափահարություններով: 30.03.2026

## Պատմաբան Գրիշա Սմբատյանի գրքերի շնորհանդեսը

Լախախանությունը Գրիշա Սմբատյանի պատմաբանի գրքեր գրելու շնորհով է օժտել: Նա էլ լիաբուռ օգտվում է այդ շնորհից: Արդեն ընթերցողի սեղանին է դրել ինը գիրք, մինչև տարեվերջ կլինի տասներորդը:

Առաջին ուսումնասիրությունը «Հարյուրամյա պատերազմ... Օրեր և մարտիկ» գիրքն էր՝ գրված օրագրային տեսքով: Գրքում նկարագրվում է Կապանի շրջանում ծավալվող իրադարձությունները 1988 թվականից սկսած: Ներկայացվում է Ղարաբաղյան շարժումը, անկախացումը, սեփականաշնորհումը և սրան զուգահեռ Ադրբեջանի դեմ 90-ականներին Կապանի շրջանում պայքարը, հարձակումները և դիմադրությունը: Ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ:

Այնուհետև անդրադարձավ Սյունիքի պատմության տարբեր դրվագների, մաս-

նավորապես խորհրդային բռնատիրության շրջանի Սյունիքի քաղաքական, տնտեսական, բարոյական, կենցաղային անցողիկներին: Առաջին անգամ դրանցում նկարագրվում է սյունեցի աքսորականների կյանքը հեռավոր Սիբիրում և Խորհրդային Միության այլ վայրերում, բռնարարները պատմական Բաղքի բնակավայրերում:

Ապրիլի 14-ին «Իմպերիալ» համալիրում տեղի ունեցավ պատմաբան-ուսումնասիրողի երեք գրքի՝ «Կապան. հետապնդող հիշողություն», «Բախում են դռներն ու դարպասները», «Ստեմել. կյանքը, գործը, ժամանակը» շնորհանդեսը: Օրվա բանախոսը բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Միեր Քունուսյանն էր, ով ի դեպ, խմբագրել է այդ երեք գիրքը: Նախ գնահատեց Գրիշա Սմբատյանի պատմաբանի վաստակը, ով պեղում-ուսումնասիրում է Սյունիքի պատմության անհայտ դրվագները, այնուհետև անդրադարձավ խնդրի առարկա գրքերի արժանիքներին: Նշեց, որ տասնամյակներ, դարեր հետո Սմբատյանի գրքերը սկզբնաղբյուրային նշանակություն են ունենալու Սյունիքի պատմությանը հետաքրքրողների, ուսումնասիրողների համար: Այսպես, թեպետ տարիներ շարունակ

հիշել է Ստեմել անունը, այնուհանդերձ, չի ճանաչվել Ստեմել մտավորականը, գրողը, լրագրողը, քաղաքական գործիչը, բժիշկը, մտավորականը, աքսորականը և անկորոն մարդը: Այս ամենին ընթերցողը հասու է լինում Գրիշա Սմբատյանի շնորհով:

Գրիշա Սմբատյանի պատմաբանի, հետազոտողի մասին գնահատանքի խոսքեր հայտնեցին գրաբարագետ Ալեքսանդր Քանալյանը, Մանե Դավթյանը, Վոլոդյա Մարտիրոսյանը, Սվետլանա Գևորգյանը:

Շնորհանդեսի ավարտին Գրիշա Սմբատյանը մանրամասնեց անելիքները. իր լավագույն գիրքը լինելու է «Տարվա հինգ եղանակները», որի վրա այժմ աշխատում է: Մի գրքի է ձեռնարկել՝ «Կարմիր աստվածամերժություն», որում պիտի արտացոլվի եկեղեցու հանդեպ խորհրդային բռնատիրության վերաբերմունքը: Կարևոր գրքի է համարում հայրենի Շիկահողի և նրա հարակից գյուղերի հանրագիտարանի կազմումը: Դրանց թվում կան նաև ամայացած գյուղեր: Զեղինակի նպատակն այն է, որ դրանք չհեռանան պատմության ասպարեզից:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

## «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը դարձել է կերպարավոր բանակի կարևոր առանցքը

Պաշտպանության նախարարության «Պաշտպան հայրենյաց» ծրագրի շահառուների թիվն այս պահին 5319 է, 2025 թվականի վերջին նրանց թիվը 4220 է եղել:

Նման հայտարարությամբ է հանդես եկել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը:

«Արհեստավարժ բանակ կերտելու ճանապարհին ներդրել ենք «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը, որն այսօր արդեն դարձել է կերպարավոր բանակի կարևոր առանցքը, իսկ հազարավոր երիտասարդներ դառնում են ծրագրի շահառու և արհեստավարժ բանակի կարևոր մասնիկ: Նրանք նախապատրաստվում են ստանում ատեստավորվել, ստանալ բարձր աշխատավարձ և նեցուկ կանգնել իրենց ընտանիքին ու պետությանը»:

06.04.2026

**Սյունյաց երկիր**  
ՀԻՍՏԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»  
ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴՊՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆՎԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
**Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵԼ ԱՆԵՍՏՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ,  
բ. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրթությունը ներկայացնելու մեթոդական վիճակում:  
«ԳՐՎԱԶՂ - ԾԱՆՈՒՅՈՒՄ» բաժնում:  
տպագրվող կրթչի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:  
Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է:  
Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:  
Գրանցման վկայականը՝ 01Ս 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բազումյանի պող., 70ա շենք  
Ծավալը՝ 2 տպագրական մասով:  
Տպագրական՝ 1010, գինը՝ 100 դրամ:  
Ստորագրված է տպագրության 17.04.2026թ.: